Ազգ

AZG
armenian newspaper

Ա տարի. # 8. Մարտ 13. 1991

Բեյքերը Երուսաղեմում հանդիպեց Պաղեստինցի երեւելիների հետ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 12 մարտ - Մ. Նահանգների պետական քարտուղար Ջեյմս Բեյքերն այսօր Երուսաղեմի ամերիկյան ներկայացուցչության շենքում հանդիպում ունեցավ Իսրայելի տիրապետության տակ գտնվող Այսրմորդանանի ու Գազայի պաղեստինցի երեւելիների հետ, խորհրդակցելու համար պրեզիդենտ Բուշի արաբ-իսրայելյան վեճը հարթելու ձգտող նոր ծրագրի շուրջը:

Երկու կողմերի միջեւ այս մակարդակի առաջին հանդիպումն էր սա, որին պաղեստինցիների կողմից մասնակցում էին 9 պատվիրակներ՝ 11 հրավիրվածներից:

Հանդիպման ավարտին պաղեստինյան կողմը Բեյքերին հանձնեց մի հուշագիր, որտեղ արաբ-իսրայելյան խնդրի կապակցությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բոլոր որոշումներին ընդառաջ գնալու պատրաստակամություն հայտնելուց հետո ասվում է, թե պաղեստինցի ժողովրդի օրինական միակ ներկայացուցիչը մնում է Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը՝ ՊԱԿ-ը:

Պաղեստինյան մի այլ ծայրահեղական թեւի ներկայացուցիչը՝ Ջորջ Հաբաշը նախորդ օրը բոյկոտ էր հայտարարել հանդիպմանը:

Թուրգուտ Օզալը Մոսկվայում

Բարեկամության եւ համագործակցության խորհրդա-թուրքական նոր պայմանագիր

Մարտի 11-ին պրեզիդենտ Թուրգուտ Օզալը Միխայիլ Գորբաչովի հրավերով ժամանեց Մոսկվա: Նրա հետ միասին պաշտոնական այցով Մոսկվա ժամանեցին պետական նախարար Գյունեշ Թաները, արտաքին գործոց նախարար Ահմեթ Քուրթաջեր Աքթեմուչինը, մշակույթի նախարար Նամըկ Քեմալ Զեյբեկը, այլ պաշտոնական անձինք, մամուլի եւ գործարար շրջանների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Ինչպես հաղորդում է թուրքական հեռուստատեսությունը, մեկնելուց առաջ Անկարայի Էսենբոդա օդանավակայանում ունեցած իր կարճ ելույթում Թուրգուտ Օզալը շեշտել է, որ պաշտոնական այցը զուգադիպում է 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված խորհրդա-թուրքական պայմանագրի 70 ամյակին: Նա ասել է, որ Մոսկվայում հանդիպելու է Ռուսաստանի Ֆեդերացիայի Գերագույն խորհրդի նախագահ Բորիս Ելցինի հետ, այնուհետեւ մեկնելու է Ուկրաինա, Ադրբեջան եւ Ղազախստան:

Թուրգուտ Օզալին Անկարայի օդանավակայան ուղեկցել են Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի նախագահ Քայա Էրդեմը, վարչապետ Ծըլդըրըմ Աքբուլութը եւ այլ պաշտոնական անձինք:

Ըստ թուրքական հեռուստատեսության առաջին ծրագրի, թռիչքի ժամանակ, ինքնաթիռի մեջ, պատասխանելով լրագրողների հարցերին, Թուրգուտ Օզալը հայտնել է, որ անցյալ շաբաթ Անկարայում են եղել Հյուսիսային Իրաքի քրդական շարժման առաջնորդ Ջալալ Թալաբանին ու Մասուդ Բարզանիի ներկայացուցիչը: Նա ասել է, թե փոխհարաբերությունների մեջ են նաեւ Իրաքի թուրքմենների հետ, նշելով, որ Թուրքիան ուշի ուշով հետեւում է Իրաքում իրադարձությունների զարգացմանը եւ քուրդ առաջնորդների հետ բանակցությունները երկրում ոչ ոքի անհանգստություն չպետք է պատճառեն:

Մարտի 11-ին Թուրգուտ Օզալը հանդիպեց Միխայիլ Գորբաչովի հետ: Բանակցությունների ընթացքում քննարկվեցին երկկողմանի փոխհարաբերությունների, Պարսից ծոցի ճգնաժամի, շրջանի եւ Սեւծովյան համագործակցության նախագծի հետ առնչվող բազմաթիվ հարցեր:

Թուրքական հեռուստատեսությունը գոհունակությամբ հայտնեց, որ բանակցությունների առաջին փուլը, որը ավարտվել է մարտի 11-ին, անցել է փոխըմբռնման պայմաններում եւ կողմերի միջեւ համաձայնություն է կայացել քննարկվող բոլոր հարցերում ոչ ոքի անհանգստություն չպատճառելու մասին:

շարունակությունը՝ էջ 8

interfax-ը հաղորդում է

Այազ Մութալիբովը պաշտպանում է միութենական պայմանագիրը

Ադրբեջանի պրեզիդենտ եւ հանրապետության կոմկուսի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Այազ Մութալիբովը հայտարարել է, որ անհրաժեշտ է պահպանել ադրբեջանական ինքնիշխան հանրապետությունը նոր Միության սահմաններում: Նա իր այս տեսակետը արտահայտեց Ադրբեջանի Գերագույն խորհրդի նիստում:

Խոսելով կենտրոնի եւ հանրապետությունների միջեւ լիազորությունների բաժանման մասին, Ա. Մութալիբովը նշեց, որ իր կարծիքով գտնվել է այդ խնդրի ճիշտ լուծումը, քանի որ սկզբից որոշված է, թե ինչպիսի լիազորություններով են օժտում Միությանը պայմանագրի մասնակիցները, իսկ հետո ինչպիսի լիազորություններ է իրագործում Միությունը հանրապետությունների հետ միասին:

Կարեւոր քայլեր են ձեռնարկվել նաեւ արտաքին գործերի բնագավառում: Նախատեսվում է, որ միութենական հանրապետությունները իրավունք կունենան Միության արտաքին գործերի նախարարության հետ մեկտեղ դիվանագիտական հարաբերություններ հաստատել ուրիշ երկրների հետ, հիմնել դեսպանատներ:

ԼՂԻՄ-Ի ԳՈՐԾԿՈՄԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՔՎԵ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼՂԻՄ-ի մարզային, շրջանային ու քաղաքային 6 խորհուրդներից 5-ի նախագահները հայտարարել են, թե մարտի 17-ի հանրաքվեն Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա խափանվում է: Մարտի 12-ին ընդունված որոշման մեջ դա հիմնավորվում է այն բանով, որ միութենական մարմինները չեն վճռել ինքնավար մարզի իշխանությունների սահմանադրական լիազորությունները ճանաչելու հարցը:

Հայտարարության հեղինակները գտնում են, որ Խ. Միությունը պահպանելու հարցով ԼՂԻՄ-ի բնակչության կարծիքին անդրադառնալ կարելի է միայն մարզի խորհրդային իշխանությունների լիազորությունները ճանաչելուց հետո:

Հայտարարության տակ չկա առավելապես ադրբեջանցիներով բնակեցված Շուշիի շրջանի գործկոմի նախագահի ստորագրությունը:

ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴԵՄ

Մարտի 11. - Նախիջեւանի ինքնավար հանրապետության միջնակարգ դպրոցների մի քանի հազար ուսուցիչներ միտինգ անցկացրեցին ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի շենքի առաջ ի պաշտպանություն իրենց սոցիալական եւ տնտեսական պահանջների: Միտինգը ավելի ուշ վերածվեց համաքաղաքացիների: Մասնակիցները պահանջում էին հրավիրել Նախիջեւանի ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի արտահերթ գումարում, ուր պետք է չեղյալ հայտարարվի մարտի 17-ին հանրաքվե անցկացնելու մասին Ադրբեջանի հանրապետության օրենքը:

Մարտի 12. - Նախիջեւանում հայտարարվեց մարտի 14-ին ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիս հրավիրելու որոշումը:

Քրդերը շրջապատել են Քերքուկը

Ըստ «Իրաքյան Քրդիստան» կազմակերպության բանբերի, նախորդ երեք օրերին շարունակվել են ընդհարումները Իրաքի հյուսիս-արեւելքի քրդաբնակ շրջաններում, քուրդ տարբեր կազմակերպությունների եւ իրաքյան բանակի միջեւ:

Բանբերը վստահեցրել է, որ մարտի 12-ի դրությամբ քրդերն իրենց ձեռքն են առել 3 նոր քաղաքներ եւ այժմ պաշարել ու ճնշում են գործադրում նավթահորերով առատ մենահարուստ քաղաքի՝ Քերքուկի վրա:

Մյուս կողմից, դեռեւս հստակ լուրեր չկան հարավ-արեւելյան շրջաններից, որտեղ անցյալ 10 օրերին բախումներ էին տեղի ունեցել Իրաքի «Հանրապետական պահակագնդի» եւ շիա արմատականների միջեւ: Իրաքյան իշխանությունները ամուր փակել են սահմանային ելումուտն ամենուր:

Փոթորիկ Հայաստանում եւ Նախիջեւանում

Անցած կիրակի Նախիջեւանի ինքնավար հանրապետության երեք շրջաններ ենթարկվեցին կործանարար փոթորկի: 20 ժամ շարունակվող քամու ուժգնությունը հասնում էր վարկյանում 30 մետրի: 150 ընտանիքներ մնացին անօթեւան:

Նախնական հաշվարկների համաձայն, հանրապետությանը հասցված վնասները հասնում են միլիոնների: Ստեղծվել է աղետի հետեւանքների վերացման պետական հանձնաժողով: Այդ նույն մրրիկն այնուհետեւ անցել է Հայաստան: Աշոցքի շրջանում վնասվել են որոշ անասնապահական օբյեկտներ: Քամին պոկել է բնակելի տների եւ այլ շենքերի տանիքները: Վնասվել են ջրատարը, կոյուղին, ջեռուցման համակարգը:

Աշոցքի շրջանում ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որը տեղում պարզում է հասցված վնասի մասշտաբները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

— ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅՈՒՄ տեղի տալով երկուշաբթի օրը ցույցի ելած ուսանողների պահանջներից մեկի առաջ, իշխանությունները աշխատանքից ազատել են Բելգրադի հեռուստատեսության նախագահին, որն ամբաստանվում էր իշխող ընկերվարական կառավարությանը թիկունք կանգնելու հանցանքով:

Այսուհանդերձ, ե՛ւ Սերբիայում, ե՛ւ ամբողջ Հարավսլավիայում վիճակը մնում է խիստ լարված, հղի՝ բախումների վտանգով:

— ԻՐԱՆՆ ու ԵԳԻՊՏՈՍԸ երեքշաբթի օրը Թեհրանում եւ Կահիրեում 12 տարի տեւած դիվանագիտական խզումից հետո փոխանակեցին առեւտրական ներկայացուցիչներ, իբրեւ առաջին քայլ դիվանագիտական կապերի ամբողջական վերականգնման:

— ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ Իրաքի դեսպանը երեկ քաղաքական ապաստանյալի իրավունք է խնդրել տեղի իշխանություններից: Իսպանական աղբյուրները չբացահայտեցին դեսպանի այդ քայլի պատճառները:

— ԱԼԲԱՆԻԱՆ 80 տարի շարունակ Մ. Նահանգների հետ իր հարաբերությունները լրիվ խզված պահելուց հետո, երեկ Վաշինգտոն առաքեց իր վարչապետ Կաբիանին՝ դիվանագիտական հարաբերությունները վերահաստատելու առաջադրանքով:

Հանքափորները պահանջում են, պրեզիդենտը՝ լռում

Արդեն երկու օր է, Մոսկվայի կենտրոնում՝ Մանեժնայա հրապարակում կանգնած ցուցարարներն իրենց աջակցությունն են արտահայտում գործադուլավոր հանքափորներին: Ցուցարարների շարքում են տարբեր դեմոկրատական կուսակցությունների եւ շարժումների ներկայացուցիչներ: Նրանք հայտարարել են, թե ցույցը կշարունակեն այնքան, մինչեւ պրեզիդենտ Գորբաչովը կընդունի հանքափորներին:

Մինչդեռ, ըստ առացված վերջին տեղեկությունների, Գորբաչովը հրաժարվել է ընդունել հանքափորների ներկայացուցիչներին: Փոխարենը, նրանց ընդունել է ԽՍՀՄ խորհրդարանի նախագահ Լուկյանովը: Նույն օրը ՌԽՖՍՀ-ի Խորհուրդների տանը հանքափորների պատվիրակությանը ընդունել է նաեւ Բ. Ելցինը: Հանքափորների ներկայացրած պահանջներն են՝ ԽՍՀՄ պրեզիդենտի հրաժարականը, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի ինքնալուծարքը, իշխանության հանձնումը Ֆեդերացիայի խորհրդին, Ելցինի քաղաքականության աջակցությունը:

Մարտի 12-ին հայտնի դարձավ, որ Դոնեցկի հանքերի գործադուլավորները ստացել են դատախազի պաշտոնական զգուշացումը, որտեղ ասվում է, որ աշխատանքի դադարեցումը հակաօրինական է եւ բոլոր մեղավորները կենթարկվեն պատասխանատվության: Սակայն, չնայած զգուշացմանը, գործադուլը շարունակվում է:

digitised by A.R.A.R.@

«ԿԱՐԵՒՈՐ ՉԷ, ԹԷ ՈՒՄ ԵՍ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ, ԿԱՐԵՒՈՐԸ ԳՈՐԾՆ Է».

ասում է Կումայրիում արդեն երրորդ տարին աշխատող ռուս շինարար Լեոնիդ ՊՈԼՈՆՍԿԻՆ

— *«Ինչպե՞ս են ընթանում վերականգնողական աշխատանքները աղետի գոտում»* հարցով դիմեցինք «Ամուրուրալսիբստրոյ» միավորման պետ, Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Լեոնիդ Պոլոնսկուն:

— Վիճակը ծանր է: Շատ շինարարներ մոռացան իրենց պարտքն ու լքեցին Կումայրին, իրենց հետ տանելով նաեւ շինտեխնիկան: Սակայն մեր ոչ մի ստորաբաժանում չի լքել աղետի գոտին: Դեռ մենք՝ սիբիրցի-ուրալցիներս, պինդ մարդիկ ենք: Միութենական շինկազմակերպությունները չկամորեն են տրամադրված. աղետի գոտի գրեթե շինանյութ ու շինտեխնիկա չի ուղարկվում: Այսօր այստեղից, վաղը այնտեղից գլխամասային կազմակերպությունները հետ են կանչում իրենց աշխատողներին: Դրա համար էլ աշխատանքի ենք վերցնում տեղացիներին, պայմանագիր կնքում նրանց հետ: Հիմա Հայաստանն ինքը պիտի կազմակերպի աղետի գոտու վերաշինությունը: Ուզում եմ մի օրինակ բերել: Երբ Ղազախստանի եւ Լենինգրադի շինարարները լքեցին Կումայրին, նրանց շինարարական բազայի վրա ստեղծվեց «Շիրակշին» շինարարական միավորումը: Սա ցույց է տալիս, որ կարող ենք, երբ ուզում ենք: Այդ առումով մենք իզուր ժամանակ կորցրինք ու տեխնիկայի ճնշող մասը լքեց գոտին: Պիտի կանխատեսեինք սա ու մեր սեփական շինարարական բազան ստեղծեինք:

— *Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր էր շինարարների գոնե մի մասին, պահել աղետի գոտում:*

— Համոզված եմ, որ եթե ժամանակին որոշվեր շինարարների կարգավիճակը, շատերը կմնային: Ինձ բանվորները հաճախ են հարցնում՝ «Լավ, մենք կմնանք այստեղ նույնիսկ այն ժամանակ, երբ մյուսները գնան, բայց որպես ի՞նչ ենք աշխատելու, ի՞նչ ենք անելու»: Նրանք որոշակիություն են ուզում, չպետք է մոռանալ, որ այս շինարարը, ով գրեթե երեք տարի աշխատել է այս պայմաններում, այն էլ մոնոլիտ շենքերի կառուցման վրա, համարվում է շատ բարձր կարգի մասնագետ, ամենուրեք նրա կարիքն է զգացվում: Մեզ մոտ հիմա աշխատում են 2500 տեղացիներ, մենք ձգտում ենք հնազագույնս կախված լինել ռուսներից:

— *Այնուամենայնիվ, եթե վաղը ձեր ղեկավարությունը ձեզ հետ կանչի, կթողնե՞ք աղետի գոտին:*

— Այդ հարցն ինձ հաճախ էին տալիս ընտրողները նախընտրական կամպանիայի ժամանակ: «Եթե ձեզ ընտրենք, հետո ընտիպված չենք լինի՞ պատվիրան տալու համար Սիբիր հասնել՞»: Առաջինը, ես այստեղ եմ եկել ոչ թե ինչ-որ մեկի հրամանով, այլ իմ պարտքը կատարելու համար: Երկրորդ. ամեն շինարարի չէ, որ բախտ է վիճակվում քաղաք կառուցել: Իսկ դա, ինչքան էլ հավակնոտ հնչի, իմ երազանքն է: Եւ երրորդ. կարեւոր չէ, թե ո՞ր միավորման կամ գերատեսչության կազմում ես աշխատում, ո՞ւմ ես ենթարկվում: Կարեւորը՝ գործն է...

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԺԱԿՅԱՆ

«Ներկայացնում եմ Հայաստանի կառավարությունը»

Հարցազրույց Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանի հետ

Հայաստանի կառավարության առայժմ միակ արտաքին ներկայացուցչությունը գտնվում է Մոսկվայում: Վերջերս ԽՍՀՄ նախարարների կաբինետին առընթեր Հայաստանի Հանրապետության նախարարաց խորհրդի մշտական ներկայացուցիչ նշանակվեց Ֆելիքս Մամիկոնյանը: Չնայած խիստ զբաղվածությանը՝ պրն. Մամիկոնյանը սիրով համաձայնեց պատասխանել «Ազգ»ի հարցերին:

Հարց.- Պրն. Մամիկոնյան, նախ խնդրում եմ պատմեք ձեր մասին:

- Պատասխան.- Արդեն քառասունհինգ տարեկան եմ, Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու: Վերջին տասը տարիներին դասախոսել եմ Երեւանի համալսարանում:

Հ.- Ձեր աշխատանքում ո՞ր հիմնական հարցերի իրագործումը պետք է ապահովեք. նշեք ամենակարեւորները:

Պ.- Հանրապետությունները միմյանց միջեւ կնքում են տնտեսական համագործակցության պայմանագրեր: Հիմնական աշխատանքը կատարվում է հանրապետություններում, բայց սկզբնական փուլում մենք պետք է նախապատրաստենք այդ պայմանագրերը, հանդիպենք, ճշգրտենք, օգտագործենք հանրապետությունների ներկայացուցչությունների կապերը: Մոսկվան այդ տեսակետից լայն հնարավորություններ է տալիս:

Մոսկվան այնպիսի խոշոր կենտրոն է, որտեղ կան բազմաթիվ արտասահմանյան ֆիրմաներ, հյուպատոսարաններ, դեսպանատներ: Դրանց հետ ուղիղ կապի միջոցով կարելի է աշխուժացնել տնտեսական հարաբերությունները: Միայն վերջին ամսվա ընթացքում պայմանագրեր ենք կնքել գերմանական «Բոշ» եւ «Տիսեն», թուրքական «Ռամ» եւ «Կոս» համատեղ ֆիրմաների հետ: Տնտեսական համագործակցության առաջարկություններ ենք ստացել Չեխիայի եւ Սլովակիայի, Բուլղարիայի հանրապետությունների դեսպանատներից: Այդ աշխատանքն սկսվել է, բայց համապատասխան օղակներ դեռեւս չկան: Մենք անպայման կստեղծենք տնտեսական հատուկ բաժին, որը կլինի ներկայացուցչության ստորաբաժանումներից մեկը:

Պետք է աշխուժացնենք նաեւ մշակութային կյանքը: Այդ առթիվ մենք հանդիպել ենք նաեւ հայկական համայնքի՝ տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպություններից ստեղծված ասոցիացիայի ներկայացուցիչների հետ եւ պայմանավորվել ենք համագործակցել:

Հետաքրքրական հանդիպումներ ենք ունեցել հատկապես պրոֆեսիոնալ շրջանների՝ հայ բժիշկների, շինարարների, արվեստագետների հետ: Նրանց պետք է կապել Հայաստանին, նրանց ուժերն օգտագործել:

Հ.- Ներկայացուցչությանն ազդակերպած միջոցառումներին Մոսկվայում ապրող հայերի մեծ մասը չի մասնակցում: Մշակութային կյանքի աշխուժացման կոնկրետ ի՞նչ ծրագրեր ունեք:

Պ.- Եթե օգտագործենք սոսկ մշակույթի կենտրոնի հնարավորությունները, ապա դրությունը կմնա անփոփոխ: Պետք է մեծ սրահներ վարձել եւ դրանցում համերգներ, հանդիպումներ անցկացնել: Սակայն դա ոչ միայն մեր պարտքն է, այլեւ հայ համայնքի: Տեղի հայերից շատերը կարծում են, որ դա միայն ներկայացուցչության հոգսն է: Ես միշտ բերում եմ ԱՄՆ-ի հայ համայնքի օրինակը: Հայաստա՞նն է արդյոք օգնել, որ դպրոցներ կառուցեն



կամ աշխուժացնեն համայնքային կյանքը: Ներկայացուցչությունն առաջին հերթին պետք է օգնի Հայաստանին: Մենք ոչ թե հայ համայնքին ենք առընթեր, այլ Հայաստանի Հանրապետությանը: Մոսկվայում ապրող մոտ 200 հազար հայերին շատ դժվար է միավորել:

Հ.- Ի՞նչ մակարդակի վրա են դրված միութենական օրգանների հետ կապերը:

Պ.- Հիմնական կապը պրեզիդենտի ապարատի հետ է: Նախարարների խորհրդի հետ նույնպես կապ ունենք: Եւ մասնակցում եմ նախարարների խորհրդի նիստերին: Նախկին ներկայացուցիչ պրն. Հայկազյանը իմ աշխատանքային առաջին օրը թեյի հրավիրեց բոլոր 15 հանրապետությունների ներկայացուցիչներին եւ ինձ ներկայացրեց իմ նոր «գործընկերներին»: Զերմ զրույց ունեցա Վրաստանի ներկայացուցիչի հետ: Օգտակար էր նաեւ հանդիպումը Ադրբեջանի ներկայացուցիչի հետ: Ես զգացի, որ Մոսկվայում շատ հարցեր ավելի հեշտ են քննարկվում, քան Երեւանում կամ Բաքվում: Եթե անգամ չգանք որեւէ համաձայնության, մտքերի փոխանակությունն իսկ որոշակի արդյունք է տալիս:

Հ.- Մի քանի խոսք ՌԽՖՍՀ - Հայաստան կապերի մասին:

Պ.- Մենք ուղիղ կապերի մեջ ենք մտել ոչ միայն հանրապետական կազմակերպությունների, այլեւ հիմնարկների հետ: Ռուսաստանի կառավարությունը բարյացակամ վերաբերմունք է ցույց տալիս: Նրանք ընդառաջեցին մեզ եւ այս՝ տարի էլ ռուս շինարարները մնացին աղետի գոտում:

Հ.- Իսկ կենտրոնի հե՞տ:

Պ.- Տնտեսական հարցերում կենտրոնն ընդառաջում է, քաղաքական հարցերում որոշակի սառնություն է նկատվում: Նրանք ելնում են քաղաքական իրավիճակից: Քաղաքական գործունեությունը միշտ չէ, որ կախված է անձից, այլ քաղաքական անհրաժեշտությունից: Այստեղ կա մեկ գործոն՝ Հայաստանի շահերը: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, այն դեռեւս փակված չէ:

Հ.- Հայկական դպրոց բացելու որեւէ մտադրություն ունե՞ք:

Պ.- Այդ հարցը մեզ հուզում է: Նախ ցանկանում ենք կարգավորել ներկայացուցչության որոշ սենյակներում տարվող կոոպերատիվ դասընթացների անցկացման ձեւերն ու ընթացքը: Դրանից զատ ցանկանում ենք վերականգնել Լազարյան ճեմարանը որպես կոլեջ՝ ռուսերենի, հայերենի, արեւելյան լեզուների, տարբեր կրոնների, պատմության, աշխարհագրության ուսուցմամբ: Դա կնպաստի ոչ միայն հայ կրթջախի, այլեւ հայ համայնքի վերածննդին:

Հ.- Մոսկվայում սովորում են Հայաստանից եկած հազարավոր ուսանողներ: Վերջին տարիներին ներկայացուցչության եւ ուսանողների հարաբերություններում նկատվեցին որոշ դրական տեղաշարժեր: Ինչպե՞ս եք պատկերացնում այդ հարաբերությունները այժմ:

Պ.- Մոսկվայում ուսանելու համար մենք պետք է ընտրենք արժանի ուսանողների, այսինքն քանակը քչացնել, որակը բարձրացնել: Չէ՞ որ նրանք յուրօրինակ կամուրջ են Հայաստանի եւ սփյուռքի միջեւ: Օրերս մենք կհանդիպենք ուսանողության ներկայացուցիչների հետ եւ կքննարկենք մեզ հուզող հիմնահարցերը:

Հ.- Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր հարաբերությունները արտաքին սփյուռքի հետ:

Պ.- Բացի մշակութային ծրագրերից, ունենք նաեւ այլ խնդիրներ, որոնց իրագործման մեջ սփյուռքահայերի օգնության կարիքն ունենք: Ցանկանում ենք ստեղծել մի հրատարակչական ընկերություն՝ իր տպարանով, տեխնիկական հագեցվածությամբ, որպեսզի տպագրենք եւ միութենական ընթերցողին ներկայացնենք մեր գրականության եւ արվեստի երեւելի նմուշները: Այդ հարցում սփյուռքահայության օժանդակությունը ցանկալի կլիներ:

Զրույցը վարեց ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»Ի ՅՈՒՆԴԸ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՈՒՄ

1991թ. մարտի 8-ին Երեւանում հայ հեղափոխական դաշնակցության հրատարակությամբ լույս տեսավ «Ազատամարտ» ազգային, հասարակական, քաղաքական շաբաթաթերթի առաջին համարը. 16 էջով, խմբագրապետությամբ Մուշեղ Միքայելյանի, խոստանալով *«հանրապետության սեփականությունը դարձնել Դաշնակցության Մրագիրը, արտացոլել նրա գաղափարներն ու տեսակետները, Հայրենիքում եւ Հայրենիքից ներգործել ի խնդիր ազատագրական պայքարի միասնության եւ միասնական ուժի ամրողջության»:*

Ողջունելով նոր թերթի ծնունդը, «Ազգ»ի խմբագրությունը հարատեւություն է մաղթում նրան հայրենի գաղափարական մթնոլորտի ընտանիքում, վասն մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրության եւ համազգային իդեալների իրականացման:

«ԱԶԳ»Ը ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Շաբաթ օրը, մարտի 9-ին, «Հրազդան» հյուրանոցի սրահներից մեկում տեղի ունեցավ «Ազգ» եռօրյա թերթի ներկայացումը մասնագիտական շրջանակներին:

Հրավիրված էին թերթերի, լրատվական ծառայությունների, մտավորականության, պետական ատյանների ներկայացուցիչներ:

Երեկոն բացեց թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը, որը, խոսելով թերթի սկզբունքների եւ նպատակների մասին, նշեց, որ նրանցից գլխավորն է *«ծառայել Հայրենիքին, ժողովրդին, պետականությանը»: «Թերթի էջերնն պիտի ստեղծվի առիթ, որպեսզի գաղափարները, տեսակետները բախվին իրարու, ուրկէ միայն կը-ծնի իսկական ճշմարտությունը»,* այնուհետեւ շարունակեց նա:

Ողջույնի խոսք ասաց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի խորհրդական Շահեն Կարամանուկյանը:

«Այս նոր ծնունդին» իր օրհնությունը հղեց Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը:

Այնուհետեւ թերթին ողջունեց գրող, ժողովրդագրամավոր Վարդգես Պետրոսյանը. *«Ուրախալի է հատկապես, որ «Ազգ»ը լուր պիտի տա, ասաց նա, որովհետեւ այսօրվա մեր թերթերում ի տարբերություն «Ազգ»ի, հիմնականում կարծիքներ են հրապարակվում, ոչ թե լուրեր»:*

Թերթի հիմնադիրներից մեկը, ՌԱԿ-ի ներկայացուցիչ դոկտոր Վաչե Ղազարյանը, նորից անդրադառնալով «Ազգ»ի նպատակներին, ասաց, թե՝ *«Ազգ»ը կհրատարակենք առաջին հերթին լուր տալու համար, այդ լրատվությունը պիտի ըլլա պատասխանատու լրատվություն ի տարբերություն կարգ մը ռամկավարական վարչակարգերու մեջ գործող խմբագիրներու, որոնք լուրերուն կմոտենան առանց պատասխանատվության գիտակցության»:*

Ինչպես ասում են՝ երեկոն անցավ «ջերմ, բարեկամական մթնոլորտում»:

ՀԱԲ-Ի «ԱԴԱՆԱ» ՋՈԿԱՏԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 11-ին Հայաստանի հանրապետության Գերագույն դատարանի կոլեգիան սկսեց *Անդրանիկ Կոլյայի Ալեքսանյանի* (ծնված 1965-ին՝ Արովյանի Սարանիստ գյուղում, անկուսակցական) եւ *Արմեն Գեորգիի Ադիխանյանի* (ծնված 1971-ին՝ Կիրովաբադում, անկուսակցական) գործերի քննությունը: Նրանք մեղադրվում են 1990 թվականի օգոստոսի 29-ին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին ենթարկվելու հարցով ՀԱԲ-ի ղեկավարության հետ բանակցելու եկած Վիտյա Այվազյանի եւ Գեղազնիկ Միքայելյանի (Զուշ) սպանության մեջ: Դատավարությունը շարունակվում է:

digitised by A.R.A.R.@

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե. Ընկերակցութեան Ալեք Մանուկեան կեդրոնի մշակութային յանձնախումբը դուրս գալով իր դասախօսութիւններու սովորական շարքէն՝ 13 Յունուար 1991ի Կիրակի կէսօրէ ետք ժամը 4 ին կը ցուցադրէր Բի.Բի.Սի-ի կողմէ պատրաստուած պատկերիզ մը Թուրքիոյ մասին: Լեցուն էր սրահը. կային շուրջ 200 հոգի:

Յանձնախումբին ատենապետը՝ պր. Լեւոն Վարդան կատարեց բացումը ծեռնարկին եւ շեշտեց թէ թուրքը շարդեր էր հայը, որեր էր տեղահան եւ զայն ափէր ամենուրեք, եւ այժմ կ'ուրանար ամէն ինչ, թէ հայն ապրեր էր անոր հետ դարերով, ազգեր եւ ազգուեր անկէ, այսուհանդերձ՝ հայը ո՞րքանով կը ճանչնար զայն՝ թուրքը. 55 միլիոն բնակչութիւն հաշուող ժողովուրդ մըն էր թուրքը եւ ունէր զօրաւոր բանակ եւ պետութիւն: Եթէ հայը որոշած էր հետապնդել իր դատը՝ անոր աւագ պարտականութիւնն էր ճանչնալ թուրքն իր ամբողջութեան մէջ, իր անցեալով ու ներկայով, իր հզօրութեամբ եւ տկարութեամբ: Անհրաժեշտութիւն մըն էր այս մէկը, եւ ահա թէ ինչո՞ւ համար կազմակերպուեր էր այս ծեռնարկը:

Քառասունհինգ վայրկեան տեւող պատկերիզը սկսաւ Պոլսոյ տեսարժան վայրերով եւ անցաւ ոսկերիչներու եւ այլ փակ շուկաները: Ապա հանդիսատեսը տարաւ գործի մարդոց հետ կայացած տեսակցութիւններու: Հոն էին ճարտարարուեստի տէրեր, խմբագիրներ եւ պետական գործիչներ, եւ մանաւանդ Թուրքիոյ նախագահը՝ Թուրգութ Օզալը: Բոլորն ալ ջատագովեցին ռամկապետականացումը թուրքին եւ Թուրքիոյ: Թուրքն արեւմտականացած էր արդէն եւ կը վայելէր ամբողջական ազատութիւն: Երկիրը ճարտարարուեստականացած էր նաեւ: Հոն էր փաստը՝ ինքնաշարժի մասերու հաւաքումին եւ ինքնաշարժի կազմութեան հսկայ գործարան մը՝ որ կը բանէր եւրոպական մեքենաներով:

Պատկերիզի վերջին մասով, որ կ'ընդգրկէր բաւական երկար ժամանակ՝ ցոյց տրուեցաւ Թուրքիոյ հարաւ-արեւելեան շրջանները իրենց՝ ակներեւ յետամնացութեամբ, թշուառութեամբ եւ միջնադար բուրող կենցաղով: Ցետին աղքատութիւնը տէրն էր բնակիչներուն, որոնք լքուած իրենց վիճակին՝ զրկուած էին կեանքի ամէնէն տարրական բարիքներէն իսկ: Այս մարդիկը «լեռնային թուրքերն» էին, այսինքն՝ քիւրտերը:

Պատկերիզի ամբողջ ընթացքին ի յայտ եկաւ կրօնական զարթնում մը Թուրքիոյ մէջ: Կը կառուցուէին նոր մզկիթներ, կ'աշխատէին հին ու նոր *մեդրեսէներ*: Ակներեւ էր նոր մղում մը դէպի կրօնական ծայրայեղականութիւն՝ երկրի մը մէջ՝ ուր Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքը հաստատեր էր ապակրօն իշխանութիւն: Ծիչդ հակասականն էր իրաւ սակայն: Հոն էին Աթաթիւրքի գիմուորները, որոնք ամէն վայրկեան պատրաստ էին ճգմելու այլախոհութեան որեւէ արտայայտութիւն:

Պատկերիզի ամբողջ տեւողութեան ոչինչ կար հայկական, ոչ իսկ քարի հայ կտոր մը:

Պատկերիզի աւարտին խօսք առաւ բեմադրիչը՝ Տիկ. Անի Մանուկեանը: Ազնիւ Տիկինն աւարտելէ ետք Հ.Բ.Ը.Միութեան Դարտնի Ցակոբեան աղջկանց վարժարանը՝ մեկներ էր Լոնդոն՝ շարունակելու համար իր ուսումը եւ Լոնդոնի համալսարանի Քինկս քոլէճին մէջ հետեւած էր լեզուագիտութեան եւ տնտեսագիտութեան: Ապա անցած՝ էր աշխատանքի՝ անգլիական մամուլի մէջ, որմէ ետք հրաւիրուած էր Բի.Բի.Սի.:

Իր խօսքին մէջ տիկ. Մանուկեանն ալ շեշտեց թէ որպէս հայ շատ քիչ բան գիտէինք թուրքին մասին, որուն հետ ունէինք անժամանցելի դատ մը: Զայն ճանչնալու ուղղութեամբ մասնաւոր կերպով կազմակերպուած աշխատանք մը չունէինք: Զգացական էինք եւ ապատողական դիրքի մը մէջ կը գտնուէինք: Եթէ Թուրքիան մերժեցաւ Եւրոպական հասարակաց շուկայէն ներս՝ աչքերը դարձուց դէպի հիւսիս եւ արեւելք եւ փնտռելու ելաւ իր ցեղակիցները: Այս մէկը համաթուրանականութիւնն էր: Բի.Բի.Սի.ի թղթակիցներն այս պատճառով մեկնեցան Թուրքիա՝ տարուող աշխատանքներու մասին պատկերիզ մը պատրաստելու համար: Սակայն հոն չգտան զօրաւոր համաթուրանականութիւն:

Ծիչդ այս պահուն էր որ խլրտում մը սկսաւ հանդիսականներուն մէջ եւ եղան քանի մը հոգի, որոնք հեռացան սրահէն՝ թերեւս հաւատալով, որ եկեր էին լսելու քարոզչութիւն մը Թուրքիոյ մասին: Տիկինը շարունակեց իր խօսքը սակայն, ըստ անոր՝ Թուրքիոյ կապը սովետական սահմաններէն ներս գտնուող թրքական ցեղերու հետ այդքա՛ն էր որքան որ էր Մոսկուայի հետ:

Ի՞նչ կ'ընէր հայը՝ ըստ Տիկինին: Անցեալ տարեշրջանին բացուեր էին թրքական եւ օսմանեան արխիւները, իրաւ էր որ թերի էին անոնք եւ պակասաւոր, սակայն քանի՞ հայ պատմաբան մնկներ էր օգտուելու համար անոնցմէ: Անցեալ օգոստոսին Անգարայի մէջ կայացեր էր պատմագիտական հաւաք մը եւ հրաւիրուեր էին հայ պատմաբաններ ալ: Ներկայ էր եղած միայն Լեւոն Մարաշլեանը: Ո՞ւր էին մնացեալները: «Ինչո՞ւ չեղքալ եւ մեր տեսակէտները պաշտպանել»՝ հարց տուաւ տիկինը: Եթէ հայը պիտի մնար ինքզինքին հետ, ինքնիր մէջ ամփոփուած, ի՞նչպէս պիտի պաշտպանէր իր դատը: Այսօրուան Թուրքիան շատ բան էր առրված Եւրոպայէն եւ Ամերիկայէն եւ քարոզչական մեծ աշխատանք կը տանէր. կը տեսնէր ու կ'արձագանգէր. կը գրէր ու կը պատասխանէր: Ի՞նչ կ'ընէր հայը. եւ ի՞նչ կը հասկնայ «Հայկական Դատ» ըսելով: Ի՞նչ էր անոր ուզածը: Գիտէ՞ր թէ ի՞նչպէս կարող էր ըստանալ իր ուզածը:

Տիկին Մանուկեանի խօսքի աւարտին տեղի ունեցան հարցեր եւ պատասխաններ: Հիմնականին մէջ՝ հարցերը կեդրոնացան համաթուրանականութեան եւ անոր արտայայտութեան ձեւերուն վրայ: Թուրքն այդքա՞ն էր միամիտ, որ այս ուղղութեամբ տրուած հարցումի մը պատասխանէր եւ ըսէր, թէ ի՞նչ կը մտածէր ու կը ծրագրէր: Ապա՝ ո՞վ էր հոգացեր պատկերիզին ծախսերը, իսկ հոգացողը կամ հոգացողները չէի՞ն պարտադրած իրենց ուղղութիւնը՝ անոր վերջնական ձեւի պատրաստութեան մէջ: Զանազան կողմերէ հասնող հարցումներու տեղատարափ մըն էր, որուն Տիկին Մանուկեան փորձեց պատասխանել: Սակայն շուտով ի յայտ եկաւ, որ տագնապ մըն էր որ կ'ապրէր մեծամասնութիւնը ներկաներուն: Ցիրար խաչաձեւելու սկսած հարցումներուն դէմ էր որ ստիպուած միջամտեց պր. Լեւոն Վարդանը եւ յայտնեց, թէ նախընտրելի պիտի ըլլար որ այս բոլոր հարցերու մասին, որոնք առաւելաբար կ'առընչուէին համաթուրանականութեան եւ անկէ հայութեան գալիք վտանգին՝ կայանար այլ հանդիպում մը եւ մանրամասն կերպով վեր առնուէր հարցը՝ եւ ստանար իր սպառիչ պատասխանը:

Նոյն պահուն կրկնուող եւ երեքնուող ոլորտումներու եւ տեղատարափներու տակ էր որ օրուան հանդիսավարը նախընտրեց փակել տակաւ զարգացած վիճաբանութիւնները՝ անոնց վերադառնալու յստակ խոստումով, եւ, ինչո՞ւ չէ, կրկնելու խոստումով նոյնանման պատկերիզի ներկայացումը՝ յառաջիկային:

Զ. ՂԱՐԻՊԵԱՆ
«Զարթօնք»

«Թուրքիան այսօր»

Բի.Բի.Սի.ի պատկերիզը Թուրքիայի մասին

ՇՎԵԴԱՀԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Անցյալ դեկտեմբերին Սանդվիքեն քաղաքում կայացավ շվեդահայ միությունների առաջին համագումարը

Շվեդահայ գաղութը ձեւավորվել է 60-ական թվերի ավարտին, հիմնականում Միջին Արեւելքից գաղթած հայերով: Այսօր Շվեդիայում ապրում է ավելի քան 3 հազար հայ, հիմնականում Ուպսալայում եւ Ստոկհոլմում:

Ցնայած Շվեդիայի պետական դպրոցներում առնվազն 5 այլազգի աշակերտի առկայության դեպքում պետական միջոցներով դասավանդում է տվյալ փոքրամասնության մայրենի լեզուն, այնուամենայնիվ շվեդահայ միությունները կազմակերպում են կիրակնօրյա դպրոցներ: Սկանդինավիայի ու Շվեդիայի հոգեւոր հովիվն է Բարսեղ ավագ քահանա Բարսեղյանը: Գաղութում գործում են զանազան միություններ, որոնք տարանջատված կերպով տանում են ազգօգուտ գործունեություն: Եւ ահա վերջապես փորձ է արվել ի մի բերել բոլորին, ստեղծել կենտրոնացված ու համադրված աշխատանք, մի խոսքով ազգային-հոգեւոր իշխանություն: Ստորեւ տրվող զեկույցը ընդհանուր պատկերացում է տալիս այդ փորձի մասին:

Համագումարին մասնակցեցին Վաքսհոլմի մշակութային *Մասիս* միությունը, Ուպսալայի հայ առաքելական եկեղեցու խորհուրդը, Սաղվիքեն-Օքելբուի հայ մշակութային Վանա միությունը, Ուպսալայի հայ մշակութային միությունը, Հոգեւոր հովիվ Սկանդինավիո հայոց Բարսեղ ավագ քահանա Խաչերյանը, Ստոկհոլմի հայ առաքելական եկեղեցու խորհուրդը, Ստոկհոլմի հայ կանանց միությունը, Ստոկհոլմի հայ-շվեդական մշակութային կենտրոնը եւ Գոթլանդի հայ մշակութային *Արարատ* միությունը:

Համագումարը մեկ բոպե լռությամբ հարգեց Հայաստանի երկրաշարժի եւ Արցախյան պայքարի զոհերի հիշատակը: Ապա ողջույնի եւ բարի մաղթանքի խոսք ասաց Վանա միության նախագահ պր. Կ. Հակոբյանը եւ առաջարկեց համագումարի դիվանի կազմի եւ խմբագրական հանձնախմբի ընտրություն:

Օրակարգում դրվեցին գաղութի ղեկավար մարմինների ընտրության, լեզվի, Հայաստանի երկրաշարժի եւ արցախահայերին նեցուկ կանգնելու հարցերը:

Համագումարի մասնակիցները ներկայացրեցին մի շարք առաջարկներ՝ նամակ հղել շվեդական կառավարությանը հայ ապաստանյալների կապակցությամբ, մի այլ՝ զորակցության նամակ Հայաստանի խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովին, կոչ ուղղել Շվեդիայում ապրող հայ համայնքին, եւ վերջապես նամակով դիմել Հայաստանի Գերագույն խորհրդին՝ Արցախում տարվող Խ. Միության եւ մասնավորապես պրեզիդենտ Գորբաչովի քաղաքականությունը: Այդ կապակցությամբ բողոքի նամակ ուղարկվեց Նոբելյան մրցանակի կոմիտեին:

Վերջում համագումարը դիմեց Շվեդիայի հայերին՝ կոչ անելով ավելի գործուն մասնակցություն բերել Շվեդիայի հայկական նորակազմ գաղութի ազգային, կրոնական եւ մշակութային կյանքին:

Շվեդիայի դպրոցների նախարարին եւ խորհրդարանում գործող կուսակցություններին՝ հայոց լեզվի դասավանդման վերաբերյալ:

Համագումարի երկրորդ օրը որոշվեց ստեղծել Շվեդիայի հայկական միությունների *«Ռիքսֆյուրբունդ»* (ասոցիացիա):

Այնուհետեւ որոշվեց նախաձեռնել Շվեդիայում հայոց լեզու դասավանդող բոլոր ուսուցիչների համաժողով, որտեղ պետք է քննարկվեն հայոց լեզվի դասագրքի, ուսուցման մեթոդների եւ ուսուցման բարելավման հարցերը: Համաժողովի նախապատրաստական աշխատանքները հանձնարարվեց Ստոկհոլմի Հայ կանանց միությանը:

Համագումարում Հայաստանին եւ Արցախին օգնելու վերաբերյալ տրվեցին մի շարք առաջարկներ: Որոշվեց ավերիչ երկրաշարժի հետեւանքների վերացման, ինչպես նաեւ Արցախի հայ բնակչությանը նեցուկ կանգնելու ուղղությամբ Շվեդիայի հայկական համայնքի օգնությունները համադրելու նպատակով ստեղծել հանձնախումբ:

Մասնակիցներն իրենց եզրափակիչ ելույթներում արեցին հետեւյալ առաջարկությունները. միասնորեն կազմակերպել ապրիլի 24-ը, եղեռնի հուշարձան կառուցել Ստոկհոլմում, գաղութի ազգային-հասարակական գործունեության համար նյութական միջոցներ հայթայթել երգի ու պարի խմբերի ելույթներ կազմակերպելով եւ Շվեդիայի համալսարաններից մեկում բացել հայոց լեզվի ուսուցիչներ պատրաստելու ամբիոն:

ՊԱՏՄԱԲԱՆ ՌԸՆԷ ԳԵՐԴԱՆ ՄԱՀԱՑԱԾ

Վերջերս իր մահկանացուն կնքած է Ժընեւի մէջ, ուր կ'ապրէր 32 տարիէ ի վեր, Ռընէ Գերդան՝ շուրջ 15 հատորներու հեղինակ: Պատրաստութեամբ իրաւագէտ եւ տնտեսագէտ, նախ բարձր պաշտօնատար մըն էր ՄԱԿ-ի մէջ նախքան պատմաբանի եւ գրագէտի ասպարէզ մը սկսիլը:

Մնած 1913-ին, Փարիզ, հայ ծընողք, Ռընէ Գերդան ճրապուրուած էր բիւզանդական արուեստով, որուն նուիրած է քանի մը հատորներ, ինչպէս Վենետիկով, ինչ որ պատճառ եղաւ որ արժանանայ Իտալիոյ հանրապետութեան արժանաց կարգի շքանշանին:

Հեղինակն էր նաեւ քանի մը կենսագրութիւններու:

Ռընէ Գերդանի մայրը կը պատկանէր Կիպրէնկեան գերդաստանին եւ հայրը Փարիզ եկած էր Պոլսէն, ուր ծանօթ էր Գիւմիւշ-Գերդան անունով: Ինք միշտ հաւատարիմ մնացած է իր հայկական ծագումին, մանաւանդ եկեղեցիին:

«ՅՈՒՍ»

ԿԻՊՐԱՀԱՅ ՆԱՄԱԿԱՆԻ

ՄԵԼԳՈՆԵԱՆՑԻՆԵՐՈՒ ԵԼՈՅԹԸ ԿԻՊՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹԵԱՄԲ

Մեր ժողովուրդի արմատներուն հաղորդելու, անոր ուժով բարձրանալու եւ կեանք մտնելու նպատակով, աշխարհի տարբեր ափերէն Մելգոնեան կրթական հաստատութիւն եկած ուսանողութեան առօրեային անքակտելի մասը կը կազմեն հայկական երգի ու պարի յատուկ դասընթացները, որոնք կու գան առանձնայատուկ կերպով ամբողջացնելու շունչը հա՛յ ոգիի դարբնոցին:

Մելգոնեանցի սան-սանուհիներու մեկնաբանութեամբ հայկական երգի ու պարի հոգեպարար ջերմութիւնը փոխանցուեցաւ կիպրահայ գաղութին ս. Ծնունդի առթիւ, հեռուստացոյցէն ունեցած իրենց ելոյթով:

Հաստատութեան քառաձայն երգչախումբը մերթ մեղմանշիւն ու մերթ բոցաշունչ, նրբագեղ հնչեղութեամբ պատգամեց խորհուրդը հայ երգի՝ անոր բարձրանիստ կամարներէն: Երկարամեայ վաստակաշատ ուսուցիչ պրն. Ս. Արգարեանի ջանքերով ու խմբավարութեամբ անոնք կը թափանցեն հայ երգի դիւթական աշխարհը, որուն ներգօրութեամբ հայու հոգին կը մաքրուի ու կ'ազնուանայ՝ լուսաւորելու կեանքն ու շրջապատը:

Հայրենիքի ու ժողովուրդի մէջ մարմին առացած նոր շունչն ու սլացքը իր կենդանի արտացոլումը գտած է հարազատ արուեստի մէջ: Այստեղ՝ Միջերկրականի ափին, մելգոնեանցիներու սրտերուն մէջ այդ ներգործումը կատարած է հայրենի վաստակաւոր պարուսոյց պրն. Գ. Մխիթարեանը:

Աշակերտները հայ երգի ու պարի բիւրեղեայ ներդաշնակութեամբ կրցան ստեղծել այնպիսի վայրկեաններ, որոնց ներգործութիւնը չի սահմանափակուիր ժամանակի մէջ... այն հետեւողականութեամբ պիտի ընդարձակի ու փոխանցուի՝ պահպանելու ազգային դիմագիծը: Իսկ այս գիտակցութիւնը եւ պատասխանատուութիւնն է, որ պիտի ամրապնդէ ազգային մշակոյթի հանդէպ մելգոնեանցիներու սէրն ու կատարելագործման ձգտումը:

ՎԻՈԼԷԹ ՆԱԼՋԱՃԵԱՆ
Նիկոսիա

digitised by A.R.A.R.@

ՓՈԹՈՐԻԿԻ ԲԵՐԱՆՆ ԸՆԿԱԾ

Քուվեյթից մինչեւ Կալիֆորնիա հայերն զգում են պատերազմի ցնցումները

«Անապատի փոթորիկ» կոչված պատերազմն ավարտված է արդեն, սակայն դրա հետեւանքներն զգալի են ամեն տեղ: Պատերազմի պատճառած մարդկային ու նյութական ծանր կորուստները, Մերձավոր Արեւելքի երկրների ու հատկապես Իրաքի անորոշ ճակատագիրը, քաղաքական ու տնտեսական գլխապտույտ փոփոխություններն իրենց մեջ են առել նաեւ շրջանի հայությանը, որի կյանքի անորոշ հեռանկարները բազմաթիվ հայերի ստիպելու են հեռանալ դեպի կայուն եւ ապահով նկատված երկրներ, մասնավորաբար Մ. Նահանգներ ու Կանադա: Գաղթականության նոր ալիք՝ ինչն ավելի եւս տկարացնելու է հայրենամերձ մեր գաղութները, նրանց հոգեւոր ու տնտեսական հիմները, նկատի ունենալով հատկապես այն պարագան, որ 25-30 տարուց ի վեր գոյություն ունեցող Քուվեյթի հայագաղութը, լինելով մեկ նոր ճյուղավորումը մեր մյուս գաղութների, նյութապես շատ էր օժանդակում նրանց եւ՝ անհատական, եւ՝ ազգային կյանքին, չմոռանալով նաեւ այն պարագան, որ Եւրոպայում եւ Ամերիկայում հաստատված բազմաթիվ հայեր կարեւոր ներդնումներ ունեին հենց Քուվեյթում:

Մարդկային եւ ազգային ճակատագրի ողբերգական ծաղր է նաեւ այն, որ «Անապատի փոթորիկում» իրար դեմ հանդիման գտնվեցին նաեւ հայեր երկու բանակներից՝ իրաքյան եւ ամերիկյան, եւ մի գուցե...

Այս եւ այլ հարցերի մասին է պատմում Ամերիկայում լույս տեսնող ARMENIAN INTERNATIONAL MAGAZINE-ի (AIM-«Հայկական միջազգային հաղորդ») վերջին՝ 1991 փետրվարի համարում հրատարակված հոդվածը, որից թարգմանաբար լայն հատվածներ ենք ներկայացնում ստորեւ, որպես ակնարկ:

Պատերազմը մի անգամ եւս իր ավերածությունները է տարածում Մերձավոր Արեւելքի հայության վրա:

Քուվեյթի բարգավաճ հայկական գաղութը ցրիվ եկավ օգոստոսի 2-ին իրաքյան ներխուժումից: Եւ այժմ, երբ ռումբերը տեղում են Սադդամ Հուսեյնի վարչակարգի գլխին, Բաղդադի եւ Բասրայի հայերը ստիպված են ապաստան որոնել այլուր:

Կոնֆլիկտը բազմաթիվ հայերի ստիպեց փախչել Սիրիայում, Հորդանանում, Մ. Նահանգներում ու Եւրոպայում գտնվող իրենց հարազատների կամ ընկերների մոտ:

Թել-Ավիվում եւ Հայֆայում բնակվող սարսափած հայերին էլ տրվեցին գազադիմակներ՝ երբ իրաքյան «Սկադ» հրթիռներն էին պայթում իսրայելյան քաղաքներում: Տեղի եկեղեցիներում ամբարվեցին սննդեղեն եւ առաջին օգնության իրեր:

Բոլոր հայերի գործերը գտնվում են ծանր վիճակում, հատկապես նրանց՝ ովքեր կախյալ են տուրիզմից:

Ամմանում գտնվող հայերն էլ տեղեկացնում են, որ մատնվել են տնտեսական դժվարությունների, Իրաքի դեմ կիրարկվող տնտեսական շրջափակման հետեւանքով:

Պատերազմն սպառնում է նաեւ դեմ հանդիման բերել հակադիր բանակներում գտնվող այն հայերին, որոնք ծառայում են Մ. Նահանգների գլխավորած դաշնակից բանակներում եւ իրաքյան զինված ուժերի շարքերում:

Մոտավորապես 10-12 հազար հայեր իրենց կյանքն էին հաստատել Քուվեյթում, նրանցից շատերը դարձել էին հարուստ՝ գործարար ոլորտում կամ այլ ասպարեզներում: Նրանց 70 տոկոսը եկել էր Սիրիայից, գլխավորապես Հալեպից, իսկ մնացյալները՝ Լիբանանից ու Երուսաղեմից:

Այժմ մոտ 500 հոգի մնում են տեղում, չունենալով որեւէ տեղ փախչելու: Գաղութի եկեղեցական ու կրթական կյանքը կանգ է առել:

Սարգիս Ասլանյանն, օրինակ, միացավ 17 մեքենաներից կազմված քարավանին, որ Քուվեյթից Բասրա, Բաղդադ եւ Հորդանան դժվարին երթուղով ի վերջո հասավ Դամասկոս: Նա հետեւում թողեց բազմամիլիոն դոլարի արժողությամբ օծանելիքի բաշխման ձեռնարկությունը, որի ստեղծման համար իր Գրիգոր եղբոր հետ տարիներ էր հատկացրել:

«Կյանքումս չէի տեսել այդպիսի բան. հազարավոր մեքենաներ ու մարդկային բազմություններ հոսում էին սահմանային ճանապարհների վրա», հիշում է նա: *«Երբ Քուվեյթը թողեցի, գրպանումս ընդամենը 300 քուվեյթյան դինար եւ 300 ամերիկյան դոլար ունեի»:*

Նույնիսկ այժմ նա ցնցում է ապրում 35 տարուց ի վեր իր ճանաչած երկրի փլուզումից: *«Չէինք հավատում, որ հրապայլերն ու զինվորներն իրաքցի էին: Անշուշտ գիտեինք, որ Իրաքը զորք էր կուտակել սահմանի երկայնքին, սակայն կարծում էինք, որ նրանք ընդամենը 10 կմ ներս խուժելուց հետ կկանգնեն եւ իրենց պայմանները՝ կթելադրեն: Նրանք սկսեցին առավոտյան ժամը 2-ին եւ արդեն 4 ժամ հետո Քուվեյթ քաղաքի իմ տան առջեւ էին գտնվում»*, պատմում է Ասլանյանը:

Հետեւել է համատարած կողոպուտը: Փողոցներում իրաքյան ավտոմեքենաներն այնքան մեծաթիվ են եղել, որ Ասլանյանին մի պահ թվացել է, թե գտնվում է Բասրայում: Նա անճամբ տեսել է օծանելիքների իր սեփական հաստատության կողոպտվելը եւ թանկանոց օծանելիքների էժան գնով վաճառվելը մայթերի վրա, կողոպտիչների ձեռքով:

Բեյրութից 30 տարի առաջ Քուվեյթ փոխադրված Ավետիս Խաչերյանը Քուվեյթ մայրաքաղաքի Սալմիյե հարուստ թաղամասում ուներ օրը 24 ժամ աշխատող լուսանկարչատուն, ինչպես նաեւ լուսանկարչական ապարատների մի մեծ խանութ, որոնք բոլորն էլ կողոպտվեցին ներխուժման առաջին փսկ օրը: Նա իր կորուստները գնահատում է 4 միլիոն դոլար: Մտահոգվելով, որ որեւէ վատ բան կարող էր պատահել իր ընտանիքին, նա այն փոխադրել էր Կալիֆորնիա: *«Մենք Իրանից էինք զգուշանում, որ մի օր կխփի մեզ Իրաքին օգնած լինելու համար: Սակայն երբեք չէինք երեւակայում, որ Իրաքը կլինի մեզ հարվածողը»*, ասում է նա:

44 տարեկան պաղեստինահայ Ժիրայր Ուրֆալյանը Քուվեյթի Առեւտրական դրամատան գլխավոր կառավարիչի տեղակալն էր, որ 4-րդն էր նկատվում երկրում՝ իր 6 միլիարդ դոլար դրամագլխով: Նա իր ընտանիքի հետ գտնվում էր Գերմանիայում, երբ ներխուժման լուրն ստացավ: Մի գիշերվա ընթացքում նրանց դրամատունն անարժեք դարձավ, եւ նրանք դարձան գաղթական: Ժիրայրն իր ընտանիքն ուղարկեց Մ. Նահանգներ՝ բարեկամների մոտ, իսկ ինքը վերադարձավ Քուվեյթ:

«Մի խումբ հայեր տեսա այնտեղ,- պատմում է նա:- Միակ բանը, որ նրանց պահում էր՝ այդ իրավիճակում իրենց միջեւ ստեղծված ընկերությունն էր: Ամեն գիշեր հավաքվում էին մեկի տանը եւ օրուան շրջապտույտում կատարվող դեպքերի մասին: Անձկությունը մեծ էր, քանի որ Քուվեյթի գաղութը շատ բարգավաճ եւ մարդիկ շատ ջերմ էին: Եւ հանկարծ ամեն ինչ կորավ մի օրում»:

Կործանման արձագանքներն զգացին նաեւ Մերձավոր Արեւելքում եւ ավելի հեռուներում, տնտեսական աղետալի հետեւանքներով: *«Ծուրաքանչյուր հայ, որն ապրում էր Քուվեյթում, դրսում ուներ իրենից կախված մեկին, այն լիներ եղբայր կամ ծնողներ»*, ասում է Ուրֆալյանը: *«Նրանք կերակրում էին, կարելի է ասել, 30-50 հազար հայերի՝ աշխարհի շուրջը»:*

Թե Ուրֆալյանը եւ թե Ասլանյանը հավատում են, որ Քուվեյթ կվերադառնան կոիվների դադարացումից հետո: Նրանք գիտեն, որ կյանքը տարբեր կլինի, սակայն Ուրֆալյանը հույս ունի: *«Հավատում եմ, որ հայերի մեծ մասը կվերադառնա Քուվեյթ, առնվազը տեսնելու, թե կարո՞ղ են արդյոք շարունակել իրենց նախկին կյանքը: Քուվեյթին տրվող օգնությամբ ես վստահ եմ, որ այնտեղ մղում կլինի դեպի առավել ռամկավարական փոփոխություն: Մենք պետք է ունենանք ինչ-որ ձեւի իրավունքներ, որոնք անուրանալի կերպով մեզ են պատկանում: Մենք օգնել ենք երկրի զարգացմանը: Չեմ կարծում, որ այնտեղ ենք եղել միայն դրամ վաստակելու համար, ամեն մարդ ինչ-որ մաս է վերցնում երկրի կառուցման համար»:*

Մյուս կողմից, այն իրաքահայերը, որոնք պատերազմի բռնկումից առաջ իբրեւ զբոսաշրջիկ գտնվում էին Լոնդոնում, անելանելի վիճակի են մատնվել: Նրանք վախենում են Իրաք վերադառնալուց, երկյուղով կա՛մ Սադդամի զինյալ ուժերի շարքում ընդգրկվելուց եւ կամ՝ արյունալի կոիվներում բռնվելուց: Սակայն, նրանք որեւէ օգնություն չեն ստանում Բրիտանական իշխանություններից:

«Անգլիական ներքին գործերի նախարարությունը չի ընդունում այն փաստը, որ հայերը Իրաքում առանձին քրիստոնյա մի համայնք են կազմում», ասում է AIM-ի Լոնդոնի ներկայացուցիչ Միսակ Օհանյանը:

Այնտեղ գտնվող իրաքահայ ընտանիքներից շատերը շատ քիչ դրամ ունեն եւ ոչ հնար մեկ Իրաքում գտնվող իրենց միջոցներից օգտվելու:

Իրաքահայ գաղութը 108 զինվոր էր կորցրել Իրանի հետ 8 տարի տեւած պատերազմում: Այս անգամ էլ, դարձյալ իրաքյան բանակից հայ զինվորներ կային ռազմաճակատում, եւ ըստ որոշ տեղեկությունների, նրանից 2 հոգի գերի էին վերցվել դաշնակից ուժերի կողմից:

Մյուս կողմից, իրաքյան բանակի զենքերի մի մասը հայթայթվել է դարձյալ մի հայի կողմից: Դա Սարգիս Սողանալյանն

Զենքի խոշոր վաճառական Սարգիս Սողանալյան

է: Նախկին լիբանանահայ եւ 1980-ականներից Մայամիում ապրող այս անձնավորությունը նկատվում է աշխարհում մեծագույն անհատ միջնորդը զենքի առեւտրում: Նա իրաքյան բանակին հայթայթել էր ավելի քան 100 ֆրանսիական հաուբից, խորհրդային հեռահար թնդանոթներ եւ նույնիսկ 250 միլիոն դոլար արժողությամբ համազգեստ:

Սակայն Սողանալյանն ասում է, որ ինքը այդ զենքերն Իրաքին վաճառել էր Իրանի դեմ վերջինիս մղած պատերազմի ընթացքում, եւ ոչ թե ամերիկացիների դեմ օգտագործելու:

Ամերիկյան Սի.Բի.Էս. հեռուստացանցին տված իր հարցազրույցի ժամանակ Սողանալյանն ասաց, *«Այդ զենքերը վաճառվել են Խոմեյնիի դեմ կռվելու համար, երբ Խոմեյնին մեր թշնամին էր եւ Ամերիկան ապահովություններ ուներ Իրանում: Բացի այդ, ես այդ զենքերը վաճառել եմ ամերիկյան իշխանությունների գիտակցությամբ... իմ խիղճը հանգիստ է: Ես չեմ վաճառել այդ զենքերը ամերիկացի տղաներին սպանելու համար»:*

Սողանալյանն ասում է, որ ինքը չի ուզում որեւէ կապ ունենալ ներկա պատերազմի հետ եւ թե ինք մերժել է զինամթերքի շրջափակումը ճեղքելու իրաքյան մի առաջարկ: Արդեն նրա դեմ դատական գործ է բացվել 1987-ին Իրաքին ռազմական ուղղաթիռ վաճառելու ամբաստանությամբ:

Իր հերթին, Իրաքի հայոց առաջնորդ Ավագ եպս. Աստուրյանը պատերազմից 2 օր առաջ կաթոլիկ եկեղեցու առաջնորդի հետ արտասահման էր դուրս եկել խաղաղարար առաքելությամբ: Նրանք հանդիպել



digitised by A.R.A.R.@

էին Հռոմի Պապին, ինչպես նաեւ Ֆրանսիայի, Բրիտանիայի եւ Մ. Նահանգների եկեղեցական պետերի հետ՝ պատերազմը կանխելու եւ Իրաքի հետ խաղաղության բանակցություններ ձեռնարկելու համար:

AIM-ի հետ զրույցի ընթացքում Ավագ եպիսկոպոսն ասել է, որ հայերը կարողացան ցեղասպանությունից վերապրել՝ մասամբ նաեւ արաբների ասպնջականության շնորհիվ, եւ երախտապարտ են նրանց դրա համար: Նա շարունակել է, թե հայերը *«մի մասնիկն են կազմում»* ամբողջ շրջանի եւ *«կկրեն այն բեռը, որ ծանրանում է ամբողջ արաբական աշխարհի վրա, այս քշվառ ժամանակներում՝ նաեւ Իրաքի վրա»*:

Իսկ այդ բեռը, օրական ռմբակոծումներն են դաշնակից ուժերի կողմից:

Նախկին իրաքահայ, ներկայումս Մ. Նահանգներում ապրող մի մարդ, որ սերտ կապեր ունի Հորդանանում, պատմում է Բաղդադի պատերազմական կյանքի մասին:

«Առաջին գիշերն ամեն ինչ փայլատակում էր եւ պայթում: Բնակիչները չունեին ջուր, էլեկտրականություն եւ գազ: Պետությունը անոթներով գազ էր վաճառում՝ ճաշ եփելու համար»:

«Սակայն դա նորություն չէ նրանց համար,- շարունակում է նա:- Նրանք 9 տարի ապրել են այդ բոլորը Իրան-Իրաք պա-

Ամերիկյան բանակի կապիտան Արա Մանջիկյան

տերազմի օրերին»:

Իրաքի մայրաքաղաքում ապրող 15.000 հայերից մարդկային կորուստի մասին որեւէ լուր չի ստացվել դեռ: Իսկ Բասրան, որտեղ ապրում էին 5000 հայեր, վերածվել է ուրվական քաղաքի, որի բնակիչները հեռացել են արդեն, հաստատ գիտենալով, որ այն թիրախ կդառնա դաշնակիցների ռմբակոծումներին:

Բասրայի հայերից շատերը գնացել են Իրանում գտնվող իրենց հարազատների մոտ, իսկ ուրիշները՝ Բաղդադ:

Հաստատ լուրեր կան նաեւ այն մասին, Իրաքում ապրող հայերից ոմանք իրենց կամքին հակառակ գնացել են բանակ, վախենալով իրենց հարազատների նկատմամբ պատժական ձեռնարկումներից:

«Այսուհանդերձ, ասում է նա, հայերը միշտ էլ հարգված են եղել Իրաքում, հակառակ կրոնական տարբերությանը: Նրանք հարգված են եղել նաեւ կառավարության կողմից եւ վերջինս միշտ էլ օժանդակել է նրանց եկեղեցիներ կառուցելու»:

«Խղճահարություն եմ զգում իրաքցիների նկատմամբ,- ասում է նա:- Ասեմ անկեղծորեն, ես սիրում եմ իրաքցի ժողովրդին: Կառավարությունները՝ կգան ու կգնան, բայց ժողովուրդը կմնա»:

Ամերիկան նույնպես հայ ծառայողներ ունի Պարսից ծոցում:

Օրինակ՝ կապիտան Արա Մանջիկյանը, որ իր կնոջ՝ Վիկիի հետ պատրաստվում էր Գերմանիայում ամերիկյան զորամասում նշելու իրենց առաջին ամանորը: Սակայն Արան կանչվեց Պարսից ծոցում գործող զորամաս: Վիկին չի դժգոհում: Նորապսակ զույգի համար դա անակնկալ չէր: Արան 6 տարի ամերիկյան ռազմական ակադեմիայում պատրաստվել էր այն բանին, որ մի օր իր գումարտակը կառաջնորդի պատերազմ:

Գնդապետ Վահան Սիփանցին մի ուրիշ օրինակ է: Կորեական եւ վիետնամական պատերազմների 58 տարեկան այս վետերանը բանակում ծառայող կրոնական ըպասավոր է: Համոզված լինելով, որ պրեզիդենտ Բուշը ճիշտ որոշում է կայացրել միջամտելու Մոցի տագնապին, նա կամավոր գնացել է այնտեղ:

Ամերիկյան օդուժի կապիտան է Հրաչ Տեր-Ստեփանյանը, որը վարում է «C-141» ռազմական բեռնատար օդանավը: Մագումով եգիպտահայ, նա ասում է, որ կանոնավոր թռիչքներ է կատարում Մ. Նահանգներից Եվրոպա եւ Սաուդյան Արաբիա, փոխադրելով ռազմամթերք: Նրա ինքնաթիռը կարող է մի անգամից փոխադրել 130 մահճակալ հիվանդներ, եւ երբ ցամաքային կռիվները սկսվեն, նա գիտի, որ ավելի շատ եւ ավելի երկար պիտի թռչի:

Իրոք, Պարսից ծոցի պատերազմի քաղաքական ու սոցիալական հետեւանքները շատ հավանական է, որ խորապես վերաձեւավորեն ամբողջ շրջանը: Նոր դաշնակիցներ ու նոր թշնամիներ կարող են ստեղծվել, թերեւս հանգեցնելով նոր կոնֆլիկտների:

Հայերը, Քուվեյթից մինչեւ Իրաք, ստիպված կլինեն վերակառուցելու իրենց կյանքը պատերազմի թողած ավերակներից: Ինչպես որ Լիբանանում քաղաքացիական պատերազմը տարտղնեց հայերի կյանքն այնտեղ, նոր վերիվայրումները կարող են ցամաքեցնել նաեւ ա՛յս գաղութների կենսունակությունը:

Իսկ նրանք, ովքեր գտնվում են Մերձավոր Արեւելքի այլ գաղութներում, կարող է ստիպված լինեն հաշվի նստելու իսլամական ֆունդամենտալիզմի կամ միջին-արեւելյան նոր կոնֆլիկտների հետ:

ՀԱՅԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՔՈՒՎԵՅԹ (նախապատերազմյան)	6.000
ԻՐԱՔ	20.000
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ	2.000
ԵԳԻՊՏՈՍ	10.000
ԿԻՊՐՈՍ	4.000
ՀՈՐԴԱՆԱՆ	3.000
ՍԻՐԻԱ	70.000
ԹՈՒՐՔԻԱ	50.000
ԼԻԲԱՆԱՆ	100.000
ԻՐԱՆ	110.000
ԻՍՐԱՅԵԼ	2.000
Մ.Ա. ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2.000

ԻՐԱՆՅԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԹՆՈԼՈՐՏԻ ՋԵՐՄԱՑՈՒՄ

Նոր հարաբերությունների սկզբնավորում ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ

Շաբաթ օրը (մարտի 9) Վաշինգտոնում կայացած մի հարցազրույցի ժամանակ պրեզիդենտ Բուշն արաբ թղթակիցներին հայտարարեց, որ ԱՄՆ-ը, այժմ՝ երբ ավարտված է Մոցի պատերազմը, պատրաստ է բարելավելու հարաբերություններն Իրանի իսլամական իշխանությունների հետ:

Ամերիկյան Բենինգտոն համալսարանի պրոֆեսոր Մանուչ Ֆարհանգը BBC-ի թղթակցի հետ ունեցած մի հեռախոսային հարցազրույցի ժամանակ, հայտնելով իր գոհունակությունն այդ առթիվ, ասել է. «Պարոն Բուշի հայտարարությունը վկայում է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ նոր հարաբերությունների սկզբնավորման մասին: Իսկ մթնոլորտի ջերմացումը հիմնականում պայմանավորված է Իրաքի ռազմական պարտությունից հետո շրջանում Իրանի դերի կայունացմամբ եւ ամրապնդմամբ, որը եւ թույլ է տալիս Իրանին կրկին անգամ դուրս գալու դիվանագիտական բեմահարթակ: Ինչպես համոզվեցինք, - նշում է իրանցի պրոֆեսորը, - Իրանը Մոցի պատերազմի ժամանակ վարում էր բավականին ճկուն քաղաքականություն: Ընդունելով ՄԱԿ-ի բոլոր բանաձեւերը, ճգնաժամի ընթացքում Իրանը շարունակում էր իր հարաբերությունները Իրաքի հետ: Սակայն, երբ արդեն ակնհայտ էր Սադդամի եւ նրա զինվորական ուժերի անկումը, Իրանը հանդես եկավ խիստ հակասադդամյան դիրքերից, ինչը դուր եկավ ԱՄՆ-ին եւ Արեւմուտքին: Անցյալ ուրբաթ օրվա Ռաֆսանջանիի ելույթը Սադդամի պաշտոնանկ լինելու անհրաժեշտության եւ Իրաքում ցուցարարների նկատմամբ բռնության անթույլատրելիության մասին՝ մեծ գոհունակությամբ ընդունվեց հատկապես նրանց կողմից, ովքեր կասկածանքով՝ եւ թերահավատորեն էին հետեւում Իրանի գործելակերպին:

Անցյալ շաբաթվա ամերիկյան մամուլում նշված էր այն մասին, որ Իրաքի ահաբեկչական գործողությունները չեզոքացնելու նպատակով Իրանն ու Սիրիան համագործակցում են ԱՄՆ-ի հետ: Ըստ այդ հաղորդումների, ԱՄՆ-ը բարձր է գնահատում Իրանի պատրաստակամությունը համագործակցելու համար: Ներկայումս, շարունակում է Մ. Ֆարհանգը, - նորմալ հարաբերություններ ստեղծելու համար կան բոլոր նախադրյալները: Իրանը համոզված է, որ շրջանում գործուն դեր խաղալու համար պետք է լավ հարաբերությունների մեջ մտնի ԱՄՆ-ի հետ, եւ սկսի բանակցություններ վարել»:

Ֆարհանգը, պատասխանելով թղթակցի այն հարցին, թե Բուշի հայտարարությանն Իրանն ինչպես կարձագանքի, ասաց, որ Բուշն իր հայտարարությամբ արդեն արձագանքում է Իրանի դիրքորոշմանը: Հնարավոր է, որ Հ. Ռաֆսանջանին նույնիսկ իր ելույթում ընդհանրապես չանդրադառնա Բուշի հայտարարությանը: Սակայն այդ փոխըմբռնումն իր արտահայտությունը կգտնի կայանալիք բարձր մակարդակով հանդիպումների ժամանակ, վերջում նշեց պարոն Ֆարհանգը:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրանի սոցիալ-տնտեսական հետամնացության պատճառը հեղափոխությունն ու պատերազմն են եղել

Իրանի խորհրդարանի նախագահ Հ. Ռաֆսանջանին մարտի 11-ի իր ելույթում նշեց, որ Իրանը ութամյա պատերազմի ժամանակ շուրջ 600 միլիարդ դոլլարի կորուստ է կրել, եւ այդ տարիների ընթացքում մեծ թվով իրանական քաղաքներ, ավաններ, խճուղիներ, կամուրջներ եւ գործարաններ են վնասվել կամ ավերվել: Հիշեցնում ենք, որ Իրանի ղեկավարն անցյալ ամիս, ուրբաթ օրվա ավանդական ելույթի ժամանակ հայտարարել էր, որ Իրանի կորուստները իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ հասնում են մեկ տրիլիոն դոլլարի: Հենց նույն ելույթի ժամանակ Ռաֆսանջանին առաջին անգամ խոստովանեց, որ Իրանի սոցիալ-տնտեսական հետամնացության պատճառը հեղափոխությունն ու պատերազմն են եղել: Նա նշեց նաեւ, որ պատերազմի հետեւանքով 15 քաղաք եւ 1200 գյուղ ոչնչացվել կամ ավերվել են, եւ դա զարգացող մի երկրի համար անհնարելի կորուստ է:

Եվ ահա, Ռաֆսանջանին երկու օր առաջ ելույթ ունենալով Իրանի տարբեր նահանգներից Թեհրան ժամանած բարձրատիճան հոգեւորականների առջեւ՝ կրկնել է իր շուրջ մեկ ամիս առաջ կատարած հայտարարությունը: Ըստ նրա, երկրի վերականգնման համար առնվազն 10 տարի է հարկավոր: Սակայն Ռաֆսանջանին չի նշում, թե Իրանը մտադիր է փոխհատուցում պահանջել Իրաքից: Իմիջիայլոց տեղեկացնում ենք, որ օրերս Թուրքիա մեկնած Իրանի խորհրդարանի փոխնախագահ Հ. Հարիրին Անկարայում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ թղթակիցների այն հարցին, թե կորուստների փոխհատուցման համար իսլամական իշխանությունները մտադիր չե՞ն արդյոք օգտագործել Իրանում ապաստան գտած իրաքյան ռազմական ինքնաթիռները, բացասական պատասխան է տվել:

Նույն այդ ելույթի ժամանակ, Իրանի խորհրդարանի նախագահն Իրաքի բանակին եւ իշխանություններին մեղադրանքներ ուղղելով, մեկ անգամ եւս զգուշացրել է, որ Իրաքի ներքին վերիվայրումները կարող են աղետաբեր լինել այդ երկրի ժողովրդի համար: Նա հույս է հայտնել, որ Իրաքի մուսուլմանները վերջիվերջո հաղթանակ կտանեն: Հիշեցնենք, որ Իրանի իսլամական իշխանություններն անապասելիորեն փոխելով իրենց դիրքորոշումը, սադդամյան ռեժիմի դեմ քարոզչական արշավ են ընկսել, եւ պահանջում են Սադդամից տեղի տալ:

Եթերից քաղեց
Գրիգոր ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

ԻՐԱՔԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

...Արաբները, որպես ժողովուրդ, շատ լավ հարաբերությունների մեջ են եղել հայերի հետ: Նրանք դիմավորել են մեզ բաց ձեռքերով: Մենք արաբ ժողովրդին պարտք ենք ու երախտապարտ:

Ինչպես նախապես հայտնել էինք, Իրաքի հայոց առաջնորդը՝ Ավագ եպս. Ասատրյանը պատերազմի բռնկումից ընդամենը երկու օր առաջ, 13 հունվար 1991-ին խաղաղարար առաքելությամբ դուրս էր եկել երկրից, քրիստոնյա այլ եկեղեցիների առաջնորդների ուղեկցությամբ: Նրանք հանդիպեցին Հռոմի Պապին, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ու Մ. Նահանգների եկեղեցական պետերին, խնդրելով կանխել պատերազմը:

13 փետրվար 1991-ին Ավագ Սրբազանը AIM-ի հետ ունեցել է մի ընդարձակ հարցազրույց, որից թարգմանաբար ներկայացնում ենք հետեւյալ հատվածները.

Հ.- Մերձավոր Արեւելքում հակաարեւմտյան տրամադրությունները կարո՞ղ են հակաքրիստոնյա զգացումների վերածվել:

Պ.- Հույս եմ տածում՝ ոչ: Ցարդ մենք Իրաքում ունեցել ենք շատ բարեկամական հարաբերություններ իսլամների հետ:

Հ.- Որեւէ մտավախություն ունե՞ք, որ հայերի զգվածային արտագաղթ կսկսվի Իրաքից:

Պ.- Դա կախում ունի երկրում ստեղծվելիք վիճակից: Իրաքը հարուստ երկիր է, կյանքը՝ շատ հեշտ, մարդիկ՝ ազնիվ: Եթե այս կոնֆլիկտից հետո վիճակը լավանա, չեմ կարծում, որ հայերը գաղթեն: Հույս ունեմ՝ ոչ:

Հ.- Իրաքում կա՞, արդյոք կրոնական հալածանք:

Պ.- Բացարձակապես ոչ: Նույնը նաեւ ամբողջ Մերձավոր Արեւելքում: Պետք է ասեմ, որ արաբները, որպես ժողովուրդ, շատ լավ հարաբերությունների մեջ են եղել հայերի հետ: Նրանք դիմավորել են մեզ բաց ձեռքերով: Մենք արաբ ժողովրդին պարտք ենք ու երախտապարտ:

Հ.- Ի՞նչ էին հայ գաղութի տրամադրությունները Բաղդադից ձեր դուրս գալուց առաջ:

Պ.- Անշուշտ մտահոգություն կար, սակայն ինչ-որ չափով ժողովուրդը լավատես էր: Մտածում էինք, թե արդյոք այս բոլորը կլուծվեն բանակցություններով: Սակայն որեւէ խուճապ չկար:

Հ.- Ի՞նչ եղան ձեր զգացումները, երբ լսեցիք պատերազմն սկսելու լուրը:

Պ.- Հռոմում էինք այդ պահին: Առաջին լուրը ցնցեց ինձ: Մտածեցի, որ մենք ամեն բան պետք է անեինք ժամ առաջ տուն վերադառնալու համար, քանի որ մենք մեր առաքելությունը ձեռնարկել էինք պատերազմը կանխելու համար, մինչդեռ կռիվները արդեն սկսվել էին:

Այնուհետեւ սակայն, որոշեցինք շարունակել մեր առաքելությունը, որն այժմ ավելի կարեւոր էր դարձել, փորձել կանգնեցնելու բախումները, եւ կամ ձայն բարձրացնել թշնամանքին վերջ տալու համար:

Վերադառնում ենք Ամմանի (Հորդանան) ճանապարհով, մարտի առաջին շաբաթ: Չգիտեմ թե որքան ժամանակ կխլի մեզնից Բաղդադ հասնելը, քանի որ ճանապարհը շարունակաբար կրակի տակ է:

Երբեք չեմ մտածել իմ անձնական ապահովության մասին, սակայն այժմ ջղայնի վիճակում եմ: Հավատացած եմ, որ այնտեղ պետք է լինեմ, իմ ժողովրդի կողքին:

digitised by A.R.A.R.@

ԻՍՐԱՅԵԼՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՐԵԱՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ ԱՊՐՈՒՄ

ԹԵԼ-ԱՎԻՎ *մարտի 7.-* Արդեն երկու տարի է, ինչ խորհրդային բազմաթիվ հրեաներ Իսրայել են վերադարձել, սակայն Իսրայելի այն հույսերը, թե ի վերջո հրեական երկու հատվածները հանգիստ կհամաձուլվեն, հօդս ցնդեցին երկրում ստեղծված տնտեսական անհյուրընկալ դրության պատճառով:

Սահմանափակ բնական պաշարները, թույլ պլանավորումը եւ զանգվածային ներգաղթը (1989 մարտից ի վեր 220 հազար հրեաներ են տեղափոխվել Իսրայել) նվազեցնում են նոր եկողներին ներդիրուելու երկրի կարողությունը:

Ներկայումս պրոբլեմներն այնքան են լրջացել, որ պետական պաշտոնատարներից ոմանք մտահոգություն են հայտնում, թե ներգաղթը կարող է կանգ առնել կամ էլ նոր եկողները կարող են հեռանալ:

«Այնպես պետք է անել, որ նոր դժվարություններով չստիպենք ներգաղթածներին հեռանալու մասին մտածել», այս շաբաթ հայտարարեց վերադարձող հրեաներին ընդունման գծով նախարար Իցհակ Պերեցը:

Մտահոգության անմիջական պատճառը ներգաղթողներին տրվող պետական նպաստի նվազեցման որոշումն է, որը երկրորդն է վեց ամսում: Նպաստի վերջին չափը հեռու է անհրաժեշտ մակարդակից:

Բազմաթիվ երկրներ այժմ նվազեցրել են ներգաղթողներին տրվող նպաստի չափը: Իսրայելում վիճակն ավելի է ծանր, նկատի ունենալով, որ այն ի վիճակի չէ հազարավոր ներգաղթողներին հարմար բնակարան եւ աշխատանք տրամադրել: Դա հատկապես խիստ է անդրադառնում Խ. Միությունից գաղթածների վրա, որոնց չի թույլատրվում այնտեղից դուրս գալուց բավարար դրամ հանել: Հետեւաբար պետական հատուցումը կամ նպաստը գլխավոր միջոցն է, որով սրանք կարող են նոր կյանք սկսել:

Դրա հետեւանքով իսրայելական մամուլում դառը պատմություններ են պատմվում լքված շենքերում ու կեղտոտ պանդոկներում ապաստանած խորհրդային հրեա ընտանիքների մասին:

Անցյալ օրը, Փարդես Հանան քաղաքում, լուսանկարիչներն իրար էին հրմշտում չորս բազմանդամ ընտանիքներ լուսանկարելու համար, որոնց տեղափոխել էին (ըստ քաղաքի ղեկավարության՝ ժամանակավորապես) հազիվ 6 x 6 մետրի վրա բետոնապատ մի ամբապատարան:

Հեռուստատեսությունը նկարել էր Խ. Միությունից նոր եկած հրեաներին լքված շենքերից ուժով հեռացնելիս եւ ի ցույց հանել հետաքրքրասեր հասարակայնությանը: Նրանց ստիպել էին ամբողջ երկու շաբաթ բնակվել իրենց նոր «բնակարանում», առանց էլեկտրականության, ջրի ու այլ հարմարությունների, քանի որ ավելին անելու հնար չունեին: *«Մեզ միջոցներ տվեք Խ.Միություն վերադառնալու, ու մենք կվերադառնանք»*, հեռուստացույցի էկրանից գոռում էր մի մարդ, որին ոստիկանը զոռով դուրս էր հանում:

Այս եւ նմանօրինակ ուրիշ դեպքեր այս շաբաթ ստիպեցին ներգաղթի նախարար Պերեցին զանգատվելու խորհրդարանի առաջ, թե Իսրայելում լույս տեսնող ռուսալեզու բազմաթիվ թերթեր վերջերս սկսել են նոր եկողներին հասցեագրված առեւտրական ծանուցումներ հրատարակել:

«Ես կօգնեմ քեզ փախստականի կարգավիճակ ստանալու եւ տեղափոխվելու Գերմանիա», հայտարարում էր այդ ծանուցումներից մեկը: *«Մենք ամենակարճ ժամանակում ենք փաստաթղթերը ձեւակերպում»*, ծանուցում էր մեկ ուրիշը, առկարկելով Հյուսիսային Ամերիկա կամ Եւրոպա գաղթելու ձեւակերպումները:

Պերեցն ասաց, թե իր նախարարությունը անցնող մի քանի օրերի ընթացքում բացահայտել է Թել-Ավիվում եւ Հայֆայում բացված իրավաբանական բազմաթիվ գրասենյակներ, որոնց նպատակն է, ըստ իրեն, քաջալերել խորհրդային հրեաներին Իսրայելից գաղթելու Գերմանիա, Կանադա, Ավստրալիա, Հարավ-Աֆրիկա եւ այլ երկրներ:

Ամերիկայում ներգաղթի օրենքները փոխված են

Խ. Միությունից գաղթած հրեաներից շատերն են ուզում տեղափոխվել այլուր, սակայն Մ. Նահանգներում ներգաղթի նոր քաղաքականությունը սառեցրել է այդպիսի ծրագրերը: Իսրայել ներգաղթածներից շատերը, ներառյալ Խ. Միությունից գաղթածները, անցյալում թողել են երկիրը դեպի այլ ափեր: Այսուհանդերձ, ասում է Պերեսը, վերոհիշյալ գրասենյակների ծառայություններից օգտվել ցանկացողների թիվը մեծ չէ, հազիվ 500 եւ 1000-ի միջեւ:

Արտագաղթի գլխավոր պատճառը Իսրայելի տնտեսության տկարությունն է:

Տնտեսագետները եւ գաղթականության հարցերի մասնագետները ասում են, որ կառավարությունն անտեսել է այն նախազգուշացումները, ուր ուշադրություն էր հրավիրվում երկրի տնտեսական ասպարեզում պատահած մեծ փոփոխությունների վրա: Դրան որպես հետեւանք, շարունակում են նրանք, երկրի առեւտուրն ու արդյունաբերությունն անկարող են ապահովելու արդեն 220 հազարի հասած խորհրդային հրեաների բնակարանային եւ այլ պահանջները, չհաշված այն մեկ միլիոն ներգաղթողներին, որոնք հասնելու են առաջիկա 2-3 տարիներին:

Ռիչարդ ՄակԳոռնաքը, Մ. Նահանգների տնտեսության փոխնախարարը, խիստ ու շիտակ էր իր քննադատության մեջ: Անցյալ շաբաթ նա հայտարարեց, թե «իսրայելյան տնտեսությունը ներգաղթողների հսկա աւիթը ներծծելու համար վճռական միջոցառումների կարիք ունի: Վատահ եմ, որ փոփոխությունները կկատարվեն, քանզի առանց այդ փոփոխությունների ոչ մի հնար չկա, որ անհրաժեշտ քանակությամբ ներդրումներ շարունակվեն այս հարցը դիմագրավելու համար»:

Առաջարկված փոփոխություններից գլխավորը սեփականաշնորհումն է: Իսրայելի տնտեսության կեսից ավելին պետությանն է պատկանում: Բազմաթիվ տեղեկագրեր ցույց են տալիս այդ մարմնի անճարակ ղեկավարումը *(մենեջմենթ)*, եւ ամսեամիս ձեռնարկություններն իրար հետեւից կառավարական փրկարար ներդրումների պահանջ են ներկայացնում:

Իսրայելում ներգաղթի առաջին տարին կառավարությունը յուրաքանչյուր ընտանիքի վճարում էր շուրջ 11 հազար դոլլար: Սակայն ամենավերջին կրճատումից հետո այն հասել է 4250 դոլլար հատկացումի՝ առավել 2500 դոլլար փոխատվության, վերջինը՝ 3 տարուց հետո հետգհետե վերադարձվելու պայմանով:

Հատկացումների չափի նվազման հետ, կառավարությանը դեռեւս չի հաջողվել ամբողջացնել բնակարանային որեւէ ծրագիր, թեեւ շատ են նոր կառուցվող կամ առաջարկվող բնակարանները: Արդյունքն եղել է այն, որ մեկ սենյականոց բնակարանի վարձը մեծ քաղաքներում ամսական հասել է 450 դոլլարի, իսկ տարեկան՝ 5400 դոլլարի, ինչը հավասար է նոր եկողներին տրվող պետական հատկացումների 80 տոկոսին:

Գադ Բեն Արին, Հրեական գործակալության բանբերը, հաղորդում է, որ անցնող մի քանի օրերի ընթացքում ժամանող ներգաղթողների օրական թիվը կազմում է 500 մարդ, այսինքն՝ շատ ավելի, քան ամսվա ընթացքում: Պարսից ծոցի պատերազմի ընթացքում Խ. Միությունից Իսրայել գաղթող հրեաների թիվը նվազեց եւ հասավ 7260 մարդու՝ փետրվարին, դեկտեմբեր ամսվա 35200-ի դիմաց:

Բեն Արին եւ ուրիշներն ասում են, որ իրենք գաղթականների թվի աճ են ակնկալում: Նույն կարծիքին չէ սակայն Ցուրի Էդելշտեյնը, որ «Խորհրդային հրեա սիոնիստական ֆորում» գրասենյակի տերն է: *«Շատ ենք վախենում, որ այս ընթացքը հարված հասցնի մեր ողջ գործին կամ նվազեցնի ներգաղթողների հոսքը, որին այնքան ձգտում ենք բոլորս»*, ասում է նա:

ՋՈՆ ԲՐՈՆԼԻՆ
THE NEW YORK TIMES
9 մարտ, 1991

ԼՈՅԱԿ ԼՈՅԱԿ ԼՈՅԱԿ

«ԱՐԱՐԱՏ»Ը ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍՈՒՄ Է ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

Մարտի 10-ին «Արարատ»ը Երեւանում Խ. Միության բարձրագույն խմբի 54-րդ առաջնության մեկնարկային խաղում 1:0 հաշվով հաղթեց Մինսկի «Դինամո»ին: Գոլը 59-րդ րոպեին խփեց Ալբերտ Սարգսյանը, որն արժանացավ նաեւ Հայաստանի երիտասարդական միության կողմից սահմանված 500 ռուբլի մրցանակին: Մրցանակներ սահմանողների թիվը գնալով ավելանում է: Այսպես, խաղից հետո «Թասիկ» կոոպերատիվի աշխատակից Գարիկ Կարապետյանը խոստացավ «Հրազդան» մարզադաշտում կայացած յուրաքանչյուր հանդիպման ժամանակ արարատցիների կողմից խփված գեղեցիկ գոլի հեղինակին իր անձնական հաշվից 100 ռուբլի նվիրել, մի պայմանով, որ ինքն է որոշելու գեղեցիկ գոլը:

«Արարատ»ի կազմը. Հ. Արրահամյան, Մուքիասյան, Վ. Խաչատրյան, Ա. Խաչատրյան, Հովհաննիսյան, Մարգսյան, Եղգիբարյան, Մելիքյան (Գալստյան, 87), Ս. Հակոբյան (Ավետիսյան, 46), Մարկոսյան, Գասպեյան:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՀԱՂԹԱՆԱԿԸ ԿՈԼԵԿՏԻՎ ԽԱՂԻ ԱՐԴՅՈՒՆՔ Է»

Թե՛ խաղից եւ թե՛ արդյունքից դժգոհ լինելու իրավունք չունեմ: Չէ՞ որ մենք անչափ ցանկալի երկու միավոր վաստակեցինք: Մենք սպասում էինք ծանր մրցակցության եւ ուրախալի է, որ տղաները ոչ միայն ցուցաբերեցին ֆիզիկական լավ պատրաստականություն, այլեւ կամքի մեծ ուժ: Որեւէ մեկին չեմ կարող առանձնացնել: Բոլորն էլ իրավացիորեն արժանացան «5» գնահատականին:

Համաձայն չեմ Մալոֆեեւի բողոքարկմանը, թե իբր մրցավարը սխալ է նշանակել 11 մետրանոց հարվածը: Տարօրինակ է, որ միայն մարզիչը չտեսավ, որ Անտոնովիչը ձեռքով խաղաց տուգանային հրապարակում: Ինձ մտահոգում է մի բան. մեր տղաները լավ չեն օգտագործում գոլային պահերը: Վերջին տարիներին խաղացողներին չմտածված կերպով անընդհատ փոխում էին: Առնվազն երկու-երեք տարի համատեղ խաղալով միայն կարելի է հասկանալ իրար: Ինձ ուրախացրեց դեռեւս պատանի Վարազդատ Ավետիսյանը, որը ոչնչով չզիջեց փորձառու խաղընկերներին:

ԱՐԱՐԱՏՑԻՆԵՐԸ ՄՈՏԻԿԻՑ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1972 թվականի հոկտեմբերին: Սովորում է օլիմպիական հերթափոխի ուսումնարանում, հարձակվող է: Ճիշտ է, անցյալ տարի «Արարատ»ի հիմնական կազմում մասնակցել է մեկ խաղի, Դուշանբեում նույնիսկ գրավել «Պամիրի» դարպասը, սակայն նրան կարելի է նորեկ համարել: Վարազդատ Ավետիսյանն այս տարի մասնակցեց «Արարատ»ի պաշտոնական առաջին երկու խաղին: Գլխավոր մարզիչ Արմեն Սարգսյանը նրա հետ մեծ հույսեր է կապում:

- Ե՞րբ ես լրջորեն սկսել զբաղվել ֆուտբոլով,- հարցրի տակավին պատանի Վարազդատին:

- Ընդամենը 6 տարի առաջ: Իմ առաջին մարզիչն էր նախկինում անվանի ֆուտբոլիստ Կոնստանտին Բեգլարյանը: Հետո մարզվել եմ Մաթեւոս Մկրտչյանի եւ Սամվել Դարբինյանի մոտ: Երկու տարի անց, այսինքն 1987 թվականին ընդգրկվել եմ ԽՍՀՄ պատանեկան հավաքականում եւ մինչեւ 1990 թիվը հանդես եմ եկել այդ թիմում:

- Երբեւէ մտածում էի՞ր, թե կխաղաս «Արարատ»ում:

- Ոչ թե մտածում, այլեւ համոզված էի:

- Իհարկե, մեծ սպորտում հավատը սեփական կարողությունների նկատմամբ ամենահանրաժեշտ բաղադրիչներից է, բայց այս տարիքում որտեղի՞ց այդքան վստահություն:

- Երեւի ի ծնե այդպիսին եմ: Թող անհամեստություն չթվա, հույս ունեմ, որ կընդունեն նաեւ ԽՍՀՄ երիտասարդական կամ օլիմպիական հավաքականներից որեւէ մեկում:

- Այդ դեպքում, որո՞նք են քո ֆուտբոլային արժանիքները:

- Արագությունը եւ սլացիկ խաբքերը:

- Ֆուտբոլում ո՞վ է քո կուռքը:

- Ընդհանուր առմամբ Մարադոնան, իսկ հայկական ֆուտբոլում Էդուարդ Մարգարովն ու Խորեն Հովհաննիսյանը:

- Ընտրած աղջիկ ունե՞ս:

- Փող չունեմ: Հույս ունեմ ֆուտբոլի շնորհիվ տնտեսական վիճակս մի քիչ կարգավորել եւ նոր մտածել այդ մասին:

- Մի քիչ պատմիր ընտանիքիդ մասին:

- Մնողներս բանվորներ են: Ունեմ մեկ քույր եւ երկու եղբայր: Քույրս բժշկական ինստիտուտի դասախոս է: Եղբայրներիցս մեկն էլ բժիշկ է, իսկ մյուսը ֆուտբոլ էր խաղում: Ճակատագրի ոտքը ջարդեց եւ դրանից հետո այդ մարզաձեւը մերտնց աչքի գրողը դարձավ, ինձ չէին թողնում ֆուտբոլով զբաղվել, բայց սերը հաղթեց:

- Իսկ հիմա՞:

- Հիմա ուրիշ է, չէ՞ որ «Արարատ»ում եմ խաղում:

- Դե, ուրեմն քեզ էլ, «Արարատ»ին էլ հաջող երթ ցանկանանք:

Առաջին տուրի մյուս հանդիպումների արդյունքները՝

ԲԿՄԱ - «Մետալիստ»՝ 4:0
«Սպարտակ» Վ. - «Լոկոմոտիվ»՝ 2:2
«Պամիր» - «Դնեպր»՝ 0:0
«Պախտակոր» - «Ջերնոմորեց»՝ 0:0
«Մետալուրգ» - «Սպարտակ» Մ.՝ 2:1
«Դինամո» Մ. - «Շախտյոր»՝ 1:1
«Դինամո» Կ. - «Տորպեդո»՝ 1:3

ԼԻՆԱՐԵՍ. ԿԱՍՊԱՐՈՎԸ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ

Այստեղ շարունակվող ճատրակի միջազգային ավանդական տապեր-մրցաշարի 11-րդ տուրում աշխարհի չեմպիոնը ոչ-ոքի խաղաց Անանդի հետ, եւ 11 հնարավորից վաստակելով 7.5 միավոր՝ դարձավ միանձնյա առաջատար: Բելյավսկին զիջեց Սալովին, Իվանչուկն անավարտ թողեց հանդիպումը Գուրեւիչի հետ, Ցուտպովը ոչ-ոքի խաղաց Գելֆանդի հետ, Սփիլմենը հաղթեց Էլվեստին, Կարպով-Կամսկի հանդիպումն էլ անավարտ մնաց:

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Կիրովականում ավարտվեց Հայաստանի ճատրակի առաջին խմբի առաջնությունը, որին մասնակցեցին 34 ճատրակորդներ: Վիճարկվում էր հանրապետության բարձրագույն խմբի առաջնության երեք ուղեգիր:

Շվեյցարական մրցակարգով անցկացված մրցաշարում առաջին տեղը գրավեց Երեւանցի վարպետության թեկնածու Վարդան Գրիգորյանը, որն 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր: 7-ական միավորով հաջորդ երկու տեղերը գրավեցին նույնպես Երեւանցիներ՝ Ա. Եղիազարյանը եւ Ա. Ստամբուլյանը: Հիշյալ երեք ճատրակորդները հանդես կգան հանրապետության բարձրագույն խմբի առաջնությունում: Տանտերերից հաջող հանդես եկավ վարպետության թեկնածու Գեւորգ Գրիգորյանը, որը զբաղեցրեց չորրորդ տեղը:

«ՈՒՐԱՐՏՈՒ»Ն ԽՄԲԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ

Բասկետբոլի տղամարդկանց ԽՍՀՄ երկրորդ խմբի առաջնության նախնական փուլի խմբային մրցաշարի վերջին տուրում «Ուրարտու»ն հյուրընկալեց առաջատարին՝ Գրոդնոյի «Պրոգրես»ին, որը մինչ այդ 6 անընդմեջ հաղթանակ էր տարել, ավելին՝ երկու անգամ առավելության էր հասել «Ուրարտու»ի նկատմամբ: Խմբում առաջին տեղ գրավելու համար մեր թիմին առաջատարի հետ երկու հանդիպումներում էլ միաւն հարկավոր էր ունենալ: եւ «Ուրարտու»ի բասկետբոլիստները հուսախաբ չարեցին: Առավելությունը շոշափելի էր: Առաջին խաղում մեր բասկետբոլիստները հաղթեցին 101:74 հաշվով, իսկ երկրորդում առավելության հասան 76:50 հաշվով: Այսպիսով «Ուրարտու»ն իր խմբում գրավեց առաջին տեղը եւ եզրափակիչում շարունակելու է պայքարը առաջին խմբի ուղեգրի համար: Արդեն հայտնի է, որ եզրափակիչ են մտել նաեւ Ալմա-Աթայի ԲՄԱ-ի երկրորդ թիմը, Լենինգրադի «Սվետլանան», Կրասնոյարսկի, Մտավրոպոլի, Խարկովի եւ Բաքվի թիմերը: Վերջին մասնակիցը կորոշվի մարտի 16-ին, Մինսկի քաղաքի եւ Կիեւի թիմերի մրցավեճում:

Եզրափակիչ փուլում այս 8 թիմերը միմյանց հետ կմրցեն երկուական անգամ: Վերջին տուրի փնջային երկու մրցաշարից մեկն անցկացվելու է Երեւանում: Եզրափակիչի սկիզբը՝ մարտի 29-ին: «Ուրարտուն» Խարկովում մրցելու է Լենինգրադի, Խարկովի թիմերի եւ Մինսկի-Կիեւ զույգի հաղթողի հետ:

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Բուլղարիայում տեղի ունեցած ազատ ոճի ըմբշամարտի միջազգային ներկայացուցչական մրցաշարում, որը նվիրված էր Օսմանյան Թուրքիայի լծից բուլղար ժողովրդի ազատագրման 110 ամյակին, վերելքով հանդես եկան Երեւանի օլիմպիական հերթափոխի ուսումնարանի ըմբիշները, որոնցից 7-ը դարձան մրցանակակիրներ, իսկ Կարեն Սարգսյանը, Արմեն Զավադյանը եւ Ժիրայր Դավթյանը իրենց քաշային կարգերում գրավեցին առաջին տեղը:

ՍՓՅՈՒՌՔ

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ IV ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

ՖՐԱՆՍԻԱ. - Հ.Բ.Ը. Միության Ֆրանսիայի 4-րդ միջսանձնաձյուղային մարզական խաղերը տեղի են ունենալու Փարիզում, մարտի 30-31-ին միության երիտասարդական բաժնի նախագահ Պերռ Սեդրոսկյանի ղեկավարությամբ: 4-րդ մարզական խաղերում ընդգրկվելու են բասկետբոլի, մինի ֆուտբոլի, սեղանի թենիսի ու վոլեյբոլի մարզաձեւերը:

Ֆուտբոլի ԽՍՀՄ 54-րդ առաջնություն, բարձրագույն խումբ (1991թ.)

N:	ԹԻՄԵՐ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	Հ	Ո	Պ	Գնդակ	Մ
1	«Դինամո»Կ.	⚽																				
2	ԲԿՄԱ		⚽																			
3	«Դինամո»Մ.			⚽																		
4	«Տորպեդո»				⚽																	
5	«Սպարտակ»Մ.					⚽																
6	«Դնեպր»						⚽															
7	«Արարատ»							⚽														
8	«Շախտյոր»								⚽													
9	«Ջերնոմորեց»									⚽												
10	«Պամիր»										⚽											
11	«Մետալիստ»											⚽										
12	«Դինամո»Մն.												⚽									
13	«Սպարտակ»Վլ.													⚽								
14	«Պախտակոր»														⚽							
15	«Մետալուրգ»Զ.															⚽						
16	«Լոկոմոտիվ»																⚽					

digitised by A.R.A.R.@

11 մարտ 1991 interfax, baltfax

Բ. ԵԼՑԻՆ.

«Կամ կիսեղդեն դեմոկրատիան, կամ մենք կհաղթենք»

Հայտարարեց ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Բ. Ելցինը. «Կինոյի կենտրոնական տանը Ռուսաստանի դեմոկրատական ուժերի ու շարժումների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ: Նա կոչ արեց, որպեսզի «Դեմոկրատական Ռուսաստան» շարժման հիմքերի վրա ընտեղծվի ուժեղ, կազմակերպված կուսակցություն: Այլապես, ըստ Բ. Ելցինի, կոմունիստները սկսել են ամրապնդել իրենց դիրքերը եւ ժողովրդին վախեցնել մասնավոր սեփականությամբ, դեմոկրատիայով ու «Ելցինով»: Նա կոչ արեց անցնել հարձակման: Այնուհետեւ Ելցինը նշեց, թե իրենք բազմիցս համոզվել են, որ Գորբաչովն անընդհատ խաբում է դեմոկրատներին: *«Այն, որ մենք վստահեցինք նրան եւ ցանկացանք համագործակցել, սխալ էր: Մենք կորցրեցինք 4 ամիս: Միայն փետրվարի 19-ին ես կարողացա ասել, որ մերջում եմ Գորբաչովի քաղաքականությունը»:*

Ելցինը նշեց, որ «երկրում դեմոկրատիայի թուլացման հիմնական պատճառներն են՝ դեմոկրատների անպատրաստ լինելը խորհուրդների պրակտիկ աշխատանքին,որ նրանք Ռուսաստանի ոչ բոլոր քաղաքներում ու մարզերում հաղթանակեցին եւ որ շատերը պատգամավոր ընտրվեցին դեմոկրատների կարգախոսներով, բայց հոգում մնացին որպես դեմոկրատիայի դավաճաններ: Հետագայում նրանք ցույց տվեցին իրենց դեմքը: Հետեւաբար, նրանք ոչ թե դարձան չեզոք, այլ՝ թշնամիներ: Իզուր են այսօր ինձ ստիպում, թե «Բորիս Նիկոլաեւիչ, կանչեք Ձեզ մոտ վեցյակին, խոսեք նրանց հետ, միգուցե վերափոխվեն»: Դրանք թշնամիներ են:

Մենք իրոք պետք է օգնենք հանքափորներին (իսկ նրանք մեզ օգնում են) եւ պատերազմ հայտարարենք երկրի ղեկավարությանը, որը տանում է մեզ դեպի ճահիճ, դեպի հակադեմոկրատական գործողություններ»:

Ելցինը մեղադրեց նաեւ կենտրոնական իշխանություններին, որոնք վանեցին յոթ հանրապետություններին: Մեզ պետք չէ այդպիսի մեծ, բյուրոկրատական կենտրոն: «Մեզ պետք չեն նախարարությունները, մի բյուրոկրատական մեքենա, որ արդեն 70 տարի է վերեւից թելադրում է: Մենք պետք է դրանից հրաժարվենք: Վեց տարի շարունակ մեզ համոզում էին, թե կբանդենք հին համակարգը եւ կգնանք իսկական դեմոկրատական վերափոխումների: Դա առաջ դուրս եկավ: Մեզ խաբեցին»:

Նախագահը տեղեկացրել է նաեւ, որ մարտի 15-ին ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի քննարկմանը կներկայացվի «500 օր» ծրագրի վերամշակված օրինակը: Նա հիշեցրել է, որ նույն օրը կվերջանա նաեւ այն պայմանաժամը, ըստ որի տեղական խորհուրդների այն նախագահները, որոնք զբաղեցնում են նաեւ կուսակցական պաշտոններ, պետք է հրաժարվեին մեկնումեկից: Եթե մինչեւ մարտի 16-ը Ռուսաստանի ժողովրդական դեպուտատների համագումարի այդ որոշումը չկատարվի, ապա դատախազությունը քրեական գործ կհարուցի յուրաքանչյուր իրավախախտի դեմ: *«Այժմ Ռուսաստանի դատախազը մեր մարդն է: Մերը չէր, այժմ մերն է: Այսինքն նա է, որը պետք է Ռուսաստանի օրենքներով գործի»*, ասաց Ելցինը:

Ինչ վերաբերում է Մերձբալթիկային, եթե մենք քայլեր չձեռնարկենք, այն կրկին կզավթեին»: Վերջում նա կոչ արեց բոլոր դեմոկրատական ուժերին միավորվել:

Մարտի 11-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում քննարկվեց վերոհիշյալ ելույթը եւ այդպես էլ ոչ մի որոշում չընդունվեց:

ԼԻՏՎԱ

«Անկախ լիտվական հանրապետության դեմ ԽՍՀՄ-ի չդադարող ագրեսիայի մասին». այսպիսի հայտարարություն է ընդունել Լիտվայի գերագույն խորհրդի նախագահությունը իր հերթական նիստում:

Փաստաթղթում նշվում է, որ վերջին ժամանակներս հանրապետությունում աճել է ԽՍՀՄ ՊԱԿ-ի եւ ներքին զորքերի բանակակազմը: Զինվորականները թույլ են տալիս անհանդուրժելի կամայականություններ: Նշվում է նաեւ, որ ՏԱՍՍ-ը մտացածին ձեւով տարածում է սադրիչ լուրեր այն մասին, թե իբր Լիտվայում կենտրոնացել են մեծ թվով մարտիկներ: Փաստաթղթի հեղինակների կարծիքով, դա արվում է հանրապետության օրինական իշխանությունը տապալելու միտումով:

Այդ առթիվ Լիտվայի Գերագույն խորհրդի նախագահությունը հայտարարում է, որ «Լիտվայի իշխանությունները հանրապետության քաղաքացիների հետ համատեղ ամեն ինչ կանեն՝ պաշտպանելու անկախ Լիտվական պետության, մարդու իրավունքների եւ ազատության վերականգնումը:

ՄՈՍԿՎԱ

Երեկ, մարտի 12-ին աւտոնոմ բազմազգ խորհրդային գերմանացիների համամիութենական «Վերածնունդ» ընկերության առաջին համագումարը: Համագումարի պատվիրակների մի մասը պնդում է, որ վերականգնվի Պովոլժիեյում անօրինականորեն վերացված ինքնավար հանրապետությունը, իսկ կազմկոմիտեն եւ պետական հանձնաժողովը «հանձնարարում են» բավարարվել միայն ազգային- մշակութային ինքնավարությամբ՝ «ազգային ինքնակառավարման» ձեւով:

Խորհրդային գերմանացիներին մեծ մտահոգություն է պատճառում նաեւ այն, որ իրենց հայրենակիցների արտագաղթը 1987թ.-ի 15.000-ից 1990-ին հասել է 150.000-ի: Այժմ, ըստ վերոհիշյալ մարտահամարի տվյալների, ԽՍՀՄ-ում ապրում են 2 մլն. 300.000 գերմանացիներ, թեեւ եթե հաշվի առնվեն անձնագրերում եղած անճշտությունները, ապա նրանց իսկական թիվը կհասնի 5-6 մլն.:

Համագումարում պետք է քննարկվի նաեւ խորհրդային գերմանացիների ռեաբիլիտացիայի ձգձգման, մայրենի լեզվի, մշակույթի եւ այլ հարցեր:

ՔՈՒՎԵՅԹԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԽՈՍՏԱՆՈՒՄ

Քուվեյթի ղեկավարները ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջեյմս Բեյքերին խոստացել են, որ մտադիր են իրենց երկիրը մոտիկ ապագայում ռամկավարացնելու (ժողովրդավարացնելու), սակայն, ավելացրել են. այնքան ժամանակ, քանի Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը կմնա իշխանության գլուխ՝ Պարսից ծոցի շրջանը չի ունենա խաղաղություն եւ կայունություն:



ժպրաանկարը՝ «ՄՈՆԴ»-ի

Մարտի 9-ին Քուվեյթում կայացած հանդիպման ընթացքում քուվեյթցիները Բեյքերին ասել են նաեւ, թե իրենք պատրաստ են Իսրայելի հետ խաղաղության դաշն կնքելու, պայմանով, որ նա ընդունի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի այն որոշումները, որոնք կոչ են անում արաբական գրավյալ հողերի վերադարձման դիմաց Իսրայելի պետությունը ճանաչելու:

Քուվեյթի առաջնորդներին հայտնի է, որ արեւմտյան ռամկապետությունների օգնությամբ իրաքցիներին երկրից դուրս քշելու գնացուցակում իր տեղն ունի նաեւ իրենց իշխանությունը այլոց հետ՝ կիսելը: Բեյքերի այցին հետեւող արեւմտյան լրագրողները հաղորդում են, որ քուվեյթցի քաղաքացիները այժմ արդեն բացահայտորեն արտահայտում են իրենց դժգոհությունը երկիրը ղեկավարող Սաբահ ընտանիքի եւ հատկապես Էմիրի՝ շեյխ Ջաբեր ալ-Ահմեդ ալ-Սաբահի նկատմամբ, որ դեռեւս չի վերադարձել Քուվեյթ, սպասելով երկրում անվտանգության պայմանների բարելավմանը: Ներկայումս նա գտնվում է Թաեֆում (Սաուդյան Արաբիա), որտեղ «Շերատոն» հյուրանոցում Քուվեյթի ռամկավարացման հարցով իրեն դիմած լրագրողներին նա պատասխանել է. *«Անշուշտ, մենք համաձայն ենք ռամկավարացմանը: Համաձայն մեր սահմանադրությանը, մենք պետք է գնանք այդ ուղղությամբ»*: Սակայն, երբ հանդեսագրողներից մեկը հարց էր տվել, թե ռամկավարացման այդ գործընթացը ենթադրո՞ւմ է նաեւ քուվեյթցի կանանց թվերակելու իրավունքի շնորհումը, շեյխ Սաբահը պատասխանել է. *«Ի՞նչ ենք ասում, մեր սահմանադրությունն այդքան հեռու չի գնում: Սակայն մենք այդ մասին պետք է մտածենք ապագայում»*:

ԹՈՒՐԳՈՒՏ ՕԶԱԼԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

-ՀԻՇՄԸ՝ 1-ԻՆ ԷՋ--

ի վերաբերյալ: Նույն օրը երեկոյան Օզալը ընդունել է թուրք-մեսխեթների ներկայացուցիչներին, որոնք պրեզիդենտին հայտնել են մշտական բնակության համար Թուրքիա ներգաղթելու իրենց ցանկությունը: Թուրգուտ Օզալը մարտի 12-ին հանդիպում է ունեցել Բորիս Ելցինի հետ: Նկատի ունենալով Գորբաչով-Ելցին հակամարտությունը, կարող ենք ասել, որ Միխայիլ Գորբաչովի հրավերով Մոսկվայում գտնվող Թուրգուտ Օզալի Ռուսաստանի ղեկավարի հետ հանդիպելու նախաձեռնությունը դառնում է բավականին ուշագրավ: Նշենք, որ սա պրեզիդենտի մակարդակով Բորիս Ելցինի առաջին հանդիպումն էր Մոսկվայում: Ուշագրավ է Մոսկվա կատարած այցի ժամանակ Խորհրդային հանրապետությունների՝ Ուկրաինայի, Ադրբեջանի եւ Ղազախստանի հետ ուղղակի կապեր հաստատելու Օզալի պատրաստակամությունը:

Մարտի 12-ին Մոսկվայում խորհրդա-թուրքական բարեկամության եւ համագործակցության պայմանագիր կնքվեց կողմերի միջեւ:

Թուրգուտ Օզալը պաշտոնական երկրորդ այցն է կատարում Մոսկվա: Առաջինը կայացել էր 1986 թ. եւ այն, ինչպես նշում է «Հյուրրիեթ»ի փետրվարի 22-ի համարում թերթի քաղաքական մեկնաբան Էրթուղրուլ Օզքյոքը, անցել էր բավականին «տհաճ մթնոլորտում»: Օզքյոքի կարծիքով Գորբաչովը խուսափելով վարչապետի պաշտոնով Մոսկվա ժամանած Օզալի հետ հանդիպումից՝ թող էր Վլադիվոստոկ: Սակայն ժամանակի հետ խորհրդա-թուրքական հարաբերությունները անչափ բարելավվում են: Հեռախոսով Օզալը հաճախ կապվում է Գորբաչովի հետ, երկու երկրների միջեւ տնտեսական համագործակցության օգնությամբ կատարվում են կարեւոր քայլեր:

Էրթուղրուլ Օզքյոքը ընդունելով հանդերձ, որ խորհրդա-թուրքական հարաբերությունները երբեք այնքան ջերմ չեն եղել, ինչպես հիմա, իր անհանգստությունն էր հայտնում Պարսից ծոցի ճգնաժամի օրերին տեղի ունեցած "միջադեպի առթիվ: Խոսքը վերաբերում էր Գորբաչովի խաղաղության ծրագրին: Փետրվարի 20-ին, Մոսկվան ծրագրի բովանդակության մասին տեղյակ էր պահել ԱՄՆ-ին, Անգլիային, Ֆրանսիային, Իտալիային եւ հարեւան երկրներից Իրանին: Իսկ փետրվարի 21-ին ԽՍՀՄ-ի մամուլի քարտուղար Վիտալի Իգնատենկոն պատասխանելով այն հարցին, թե Թուրքիան ինչո՞ւ տեղյակ չի պահվել, ասել էր.- *«Մեր հարեւանների թիվը բավականին մեծ է: Բացի դրանից Իրանը ճգնաժամի առաջին իսկ օրից հանդես էր գալիս միջնորդի դերում եւ դրական քայլեր կատարում կոնֆլիկտի լուծման ուղղությամբ»*: Ինչ խոսք, Իգնատենկոյի հայտարարությունը Անկարային «դուր չէր եկել» եւ Թուրգուտ Օզալը, խոսելով պրեզիդենտ Բուշի կողմից գորբաչովյան ծրագրի մերժման մասին, հայտարարել էր, թե *«ԱՄՆ-ի վերջնական հաղթանակը ցանկալի չէ Խորհրդային Միության համար»*:

«Հյուրրիեթ»ի քաղաքական մեկնաբան Էրթուղրուլ Օզքյոքը, նույն թերթի մարտի 1-ի համարում մի անգամ եւս անդրադարձավ Օզալի այցին Մոսկվա: Պարզվում է, նախնական ծրագրի համաձայն Օզալի այցը սահմանափակվում էր Մոսկվայով: Միայն վերջին պահին, ծրագիրը ընդարձակվում եւ իր մեջ է ընդգրկում Ալմա-Աթան, Բաքուն եւ Կիեւը: Այս առիթով Օզքյոքը նշում է, որ կատարված ընտրությունը բավականին գրավիչ է: Վերջին ժամանակներում, Օզալը իր ելույթներում ամենեւին չի թաքցրել Թուրքիայի կողմից Խորհրդային Միության մահմեդական հանրապետությունների հանդեպ հետզհետե աճող հետաքրքրությունը: Առաջին հայացքից սա կարող է տարօրինակ թվալ. չէ՞ որ Մոսկվան միշտ զգայուն է եղել այս հարցերում, իսկ հիմա հանդուրժողականությամբ է վերաբերվում: Համենայնդեպս Օզալի ելույթների առթիվ Մոսկվայի կողմից բողոքի որեւէ նշան չի նկատվել: Նման մոտեցումը Օզքյոքի կողմից բացատրվում է հետեւյալ կերպ. Իրանի «իսլամական հեղափոխությունը ինչպես այլ երկրներում, այնպես էլ Խորհրդային Միության մահմեդական հանրապետություններում որոշակի ազդեցություն ունեցավ: Օգտվելով տվյալ հանրապետություններին ընձեռված Մոսկվայից անկախ գործելու հնարավորությունից՝ Իրանը զարկ տվեց իր ազդեցությունը տարածելու փորձերին: Օրինակ, երբ Ադրբեջանում բուռն ձեւով քննարկվում էր կիրիլյան այբուբենից հրաժարվելու հարցը, Իրանը մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի այն փոխարինվի արաբական այբուբենով: Տվյալ հարցում ակտիվությամբ հանդես եկավ նաեւ Թուրքիան եւ երկար ժամանակ գաղտնի ձեւով տարվող պայքարն ավարտվեց Թուրքիայի հաղթանակով: Ադրբեջանում ընդունվեց լատինական այբուբենը:

Խորհրդային ղեկավարները թե հատուկ խոսակցությունների եւ թե իրենց հայտարարությունների ժամանակ բազմիցս նշել են, որ իրենց համար Թուրքիայի ազդեցությունը մահմեդական հանրապետություններում նախընտրելի է Իրանի ազդեցությունից»: Էրթուղրուլ Օզքյոքի կարծիքով Թուրգուտ Օզալը ապագա քաղաքական ծրագրերում մեծ տեղ է հատկացնում Անդրկովկասի եւ Միջին Ասիայի մահմեդական հանրապետություններին: Նա շուրջ մեկ տարի աշխատում է *«Մեծ-ույան համագործակցության նախագծի»* վրա: Ի միջի այլոց, այդ նախագծի հեղինակը ինքը՝ Օզալն է:

ԱԶԳ եռօրյա թերթ. հասցեն՝ Երեւան 375010, Ալավերդյան 47
հեռ. 58-18-41, ֆաքս (8852)562941
AZG semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010
phone: 58-18-41, fax: (8852)562941
Խմբագիր՝ Հակոբ ԱՎԵՏԻՔՅԱՆ
Editor Hagop AVEDIKIAN
Կոմպյուտերային հրատարակություն
Լույս է տեսնում շորեքշաբթի, շաբաթ
Գինը՝ 30 կոպ.

Տպագրված է ՀԿԿ Կենտրոնական տպագրատան

digitised by A.R.A.R.@